

ԱՐԵՎ ՔՈՒՆԻ



ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ՍՊԱՀԱԿԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ

ԺՌ ՏԱՐԻ, ԹԻՒ 101, ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ 2014



ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՊԱՏԳԱՄԸ Ս. ԶԱՏԿԻԱՅ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ



Օ ՃԱԷԷԻ ձեռք ԱՀ Ճաճական ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՌԹԻՒ
Օ ՃԱՃԱՋԱՆ ԱՌԹԻՒ

«Մկրտութեամբ թաղւեցինք Նրա հետ միասին եւ հաղորդ եղանք մահւանը, որպէսզի ինչպէս որ Քրիստոսը մեռելներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք ապրենք մի նոր կեանքով» (Հո 5.4):

Պողոս առաքեալը հոռմէացիներին ուղղած իր նամակում խորիմաստ բառերով արտապատում է եւ թելադրում է մեղանշական մարդուն՝ հոգեւորապէս մկրտւելու, սրբելու եւ մաքրւելու մեղքի աղտեղութիւնից:

Քառասնօրեայ Մեծ պահոց շրջանը համբերութեամբ եւ զգաստութեամբ աւարտեցինք: Մեծ պահոց շրջանին բոլորս անդրադարձանք աստιածային, դրախտային կեանքի պարգևեած ուրախութեանը, բայց միաժամանակ ականչալուր եղանք Աւետարանի ճամ-

րով, թէ՝ ինչպէս մարդը անհնազանդւելով աստιածային կամքին եւ օրէնքին, չպահելով Աստծու պատվրանը՝ կորցրեց դրախտային կեանքի ուրախութիւնն ու երջանկութիւնը, միաժամանակ անդրադարձանք, որ մարդը կարելիութիւնն ունի վերատիրանալու իր երջանկութեանը: Անառակ որդու նման մարդը հեռացաւ Աստծու տնից եւ օրէնքից, ընկաւ մեղքի տիղմի մէջ եւ մի պահ կորցրեց իր ուրախութիւնը, ազատութիւնն ու անդրութիւնը: Մարդը մի պահ կորցրեց Աստծու տւած առաջին պատմուճանը հագնելու ուրախութիւնը եւ մարդու մէջ խաթարւեց Աստծու իսկական պատկերը:

Քառասնօրեայ պահեցողութեան այս շրջանը, լաւագոյն առիթն էր՝ մտածելու, անդրադառալու, անձը քննելու, անառակ որդու նման վերադարձի ճամբան փնտուելու եւ գտնելու, սխալը սրբագրելու, մեղքը խոստովանելու եւ կեանքի ընթացքը փոխելու: Աստիած անառակ որդու հօր նման, որպէս մեր բոլորի Հայրը, ամենողորմ Տէրը, սպասում է մեզ, սպասում է մեր վերադարձին, մեր զղումին եւ խոստովանութեանը: Ծիշտ այս պատճառով Պողոս առաքեալը թելադրում է մեզ նախ՝ հոգեւորապէս մկրտւել: Խրաքանչիւր երախայ, որ ծնւում է այս աշխարհում, եւ պատրաստ է անդամակցելու քրիստոնեական սուրբ եկեղեցուն եւ դառնալու ժառանգակիցը Քրիստոսի, պէտք է ընդունի առաջին խորհուրդը՝ Մկրտութիւնը: Մկրտութիւնն ուրիշ բան չէ եթէ ոչ՝ ջրով լացում, որը խորհրդանիշ է մաքրութեան: Մկրտութեան ջրի մէջ երեք անգամ ընկղմումով մարդը «մեռնում է» Քրիստոսի հետ, «խաչում է» Քրիստոսի հետ եւ ապա «յարութիւն է առնում» Քրիստոսի հետ: Նա դառնում է նոր մարդ՝ սրբած իր սկզբնական եւ ադամական մեղքերից, տնկակից է դառնում Քրիստոսին, ինչպէս Պողոս առաքեալը հաստատում է կորնթացիներին ուղղած իր երկրորդ նամակում ասելով. «Որեւէ մէկը, որ միացած է Քրիստոսին, նոր արարած է. նա այլեւս այն չէ, ինչ որ նախապէս էր, որովհետեւ նա ամբողջութեամբ նորոգւեց» (Բ.Կր 5.17): Մի մարդու պատճառով մեղքը մուտք գործեց աշխարհ եւ այդ իսկ պատճառով մարդ տիրեց աշխարհում: Դարձեալ մի մարդու պատճառով ամենքը մեռան եւ սակայն մի Մարդու պատճառով աստիածային շնորհը տարածւեց եւ առաւել կեանքը տիրեց աշխարհում:

Յիսուս Քրիստոսն աշխարհ եկաւ մարդու փրկութեան համար: Նա աշխարհ եկաւ հեռացած մար-

դուն Աստծուն մօտեցմելու: Նա աշխարհ եկաւ մեղքի տիղմի մէջ ընկղմած մարդուն բարձրացնելու: Նա աշխարհ եկաւ որպէս Գառն Աստծո՝ զոհագործելու, խաչելու, թաղելու եւ Իր հետ միանգամբնդմիշտ գերեզմանելու մարդկութեան ուսերի վրայ ծանրացած մեղքը: Սակայն երեք օր յետոյ Նա յարութիւն առաւ մեռելներից՝ մարդկութեանը նոր կեանք պարգևելու եւ առաջնորդելու դէպի յախտենական ուրախութիւն եւ փրկութիւն:

Պողոս առաքեալը նոյն համարում մեզ թելադրում է հաղորդ դառնալ Քրիստոսի մահիան հետ: Հաղորդ դառնալ Քրիստոսի մահիան հետ նշանակում է՝ մեռնել Քրիստոսի հետ: Երբ հաւատում ենք Քրիստոսին, նշանակում է՝ որ մեր մեջ մեռնում է «մեղաւոր անձը». սկզբում բոլորս էլ երեխաներ էինք, այժմ հասունացել եւ գիտակից ենք: Սկզբնապէս բոլորս Էլ ծառաներ եւ գերիներ էինք մեղքին, չարին եւ չարութեանը: Սակայն Քրիստոսի նման մեռնելով միայն կարող ենք ազատել մեղքի ծանրութիւնից եւ տիրապետութիւնից, կարող ենք ազատել մեղքի զօրութիւնից եւ միանգամբնդմիշտ հեռանալ մեղքի նետարձակումներից: Այլեւս չպէտք է ապրենք մեղքի ծառաների նման, այլ ապրենք Աստծուն ժառանգակից որդիների նման:

Պողոս առաքեալը նոյն համարում հաստատում է, որ մեր Տիրոջ՝ Յիսոս Քրիստոսի յարութիւնը տեղի ունեցաւ Հօր փառքով: Փառաւոր եւ հրաշափառ յարութիւնը տեղի չունեցած, Աւետարանները նկարագրում են մեզ թէ ինչպէս հրեայ իշխանաւորներն ի վերջոյ որոշեցին Յիսոս Քրիստոսին մէջտեղից վերացնել: Նրանք ամէն ճիգ թափեցին մի յանցանքով մեղադրել Քրիստոսին. ուզում էին ձերբակալել Նրան ու դատապարտել մահիան, բայց վախենում էին ամբոխից, սակայն պահը հասաւ, երբ Քրիստոսն Իր իսկ աշակերտի կողմից մատնեց, ձերբակալեց ու դատապարտեց, Նրան Պիղատոսին յանձնեցին եւ սակայն Պիղատոսը որեւէ յանցանք չգտնելով Նրա վրայ, իր ձեռքերը լաց եւ Նրան յանձնեց ժողովրդի ընտրութեանն ու որոշմանը: Նոյն ամբոխը, որ մի քանի օր առաջ «Ովսաննա»-ներով, սաղմոսներով եւ օրիններգութիւններով դիմաւորել էր Նրա յաղթական մուտքը Երուսաղէմ, նոյն այդ ամբոխը ազատ է արձակում ոճրագործին՝ Բառնաբային եւ մահիան է դատապարտում անմեղին՝ Աստւածորդուն՝ «Խաչիր Նրան» բացագանչութեամբ:

Այո՛, Աստծու կամքն իրականանալու համար Քրիստոսը սիրայօժար խաչ բարձրացաւ եւ խաչի վրայից ներեց բոլոր նրանց՝ ովքեր յանցանք էին գործել եւ նոյնիսկ Իր կողքի խաչեալին՝ աւազակին ներեց՝ ասելով. «Այսօր իսկ, Ինձ հետ կը լինես Արքայութեան մէջ», եւ Նա խաչի վրայ Իր անարատ բազուկները տարածեց եւ Իր մահկանացուն կնքեց: Մի պահ աշակերտները յուսաքրիւցին, ուրացան եւ հեռացան խաչելութեան վայրից: Զարմանալին պատահեց. Նա՝ ով կեանքի պարգեւ էր տալիս բոլորին, Ինքը որպէս պարգեւ խնդրեց Յիսոսի Արեմաթացու կողմից, ով ստանալով Նրա մարմինը, կտաւով փաթաթեց եւ իր սեփական կոյս գերեզմանի մէջ թաղեց ու մի մեծ քար գլորեց մուտքի վրայ, որտեղ զինորները գիշեր-ցերեկ հսկեցին վայրը: Երրորդ օրը տեղի ունեցաւ մեծագոյն հրաշքը, հրաշքների հրաշքը. Քրիստոս խորտակեց դժոխքի դուները, մահիան վրայ յաղթանակ տարեց եւ յաղթական դուրս եկաւ գերեզմանից՝ նոր եւ առաւել կեանք պարգեւելու այն մարդուն, որ պատրաստ էր Իր հետ մեռնելու, թաղելու եւ մանաւանդ Իր հետ յարութիւն առնելու:

Քրիստոս կատարեալ մարմնով յարութիւն առաւ եւ առաջին անգամ երեւաց իւղաբեր կանանց եւ ապա աշակերտներին: Հրեշտակները մեծագոյն աւետիսը տունցին աշխարհին, որ «Նա այստեղ չէ, այլ յարութիւն առաւ»: Ահաւասիկ այսպէս տեղի ունեցաւ յարութիւնը Քրիստոսի՝ աստւածային փառքով եւ պատով: Նրա երկրային ամբողջ կեանքը լեցուն էր աղքատութեամբ, զրպարտութեամբ, վշտով, դատապարտութեամբ, թուքով, եւ խաչելութեամբ, որ վերացաւ միայն Իր յարութեան փառքով:

Ի վերջոյ Պողոս առաքեալը թելադրում է մեզ ապրել մի նոր կեանք: Այնպէս ինչպէս Քրիստոսը պէտք է մեռներ՝ մեռելներից յարութիւն առնելու համար, մենք եւս պէտք է մեռնենք՝ թօթափելու համար

Իին մարդը՝ մեղանչական մարդը, որպէսզի յարութիւն առնենք Քրիստոսվ՝ ապրելու համար մի նոր կեանք: Անպէս ինչպէս Պօղոս առաքեալը եփեսացիներին գրած իր նամակում ասում է. «Եղէք նոր մարդ՝ ստեղծած Աստծու պատկերի համաձայն, եւ ճշմարիտ կեանքն ապրեցէք արդարութեամբ ու սրբութեամբ» (Եփ 4.24): Այսօր դիւրին չէ իին կեանքին վերջ տալ. յաճախ ասում ենք, որ մենք քրիստոնեայ ենք: Գիտակցո՞ւմ ենք, որ Քրիստոսը որպէս Փրկիչ եկաւ մեզ մահիան ճիրաններից ազատագրելու: Այսօր կարո՞ղ ենք ասել, որ «մահացել ենք» Քրիստոսի հետ. այսինքն՝ թօթափե՞լ ենք իին մարդը, ազատուե՞լ ենք մեղքի ծանրութիւնից եւ տիրապետութիւնից, պատրա՞ստ ենք Քրիստոսի համար չարշարւելու, որպէս մեղաւորներ՝ խաչ բարձրանալու, մեր մեղանչական մարմինը թաղելու, որպէսզի կարողանանք Քրիստոսի հետ յարութիւն առնել եւ ապրել մի նոր կեանք: Իսկ եթէ գիտակցաբար շարունակենք մեր իին կեանքը՝ մեղանչական կեանքը, նշանակում է, որ մեր մէջ իին մարդը «չի մահացել», նշանակում է, որ մենք չենք հաւատում եւ չենք ճանաչում Քրիստոսին. «Ով միացած է մնում Քրիստոսին, նա չի մեղանչում, իսկ ով մեղանչում է, նրան երբեք չի տեսել ու չի ճանաչել» (Ա.Յի 3.6): Լինել Քրիստոսի մէջ, նշանակում է՝ միանալ Քրիստոսին, ով մեզ յախտենական կեանք է տալիս: Իսկ երբ լինենք մեղքի մէջ, նա ի՞նչ կը տայ մեզ, եթէ ոչ միայն՝ յախտենական դատապարտում եւ մար. «Որովհետեւ մեղքի վարձը մահն է, մինչդեռ Աստված, որպէս ձրի պարգեւ՝ յախտենական կեանքն է տալիս մեր Տիրոց՝ Ցիսուս Քրիստոսի միջոցով» (Հո 6.23):

Ահաւասիկ պատգամը Քրիստոսի հրաշափառ յարութեան: Հայ ժողովուրդը առաջին ազգը հանդիսացաւ, որ հոգեւորապէս մկրտւեց, ընդունեց քրիստոնէութիւնը, դարձաւ ժառանգակիցը Քրիստոսի, ճանաչեց ու հաւատաց Նրան, մեռաւ Նրա համար, թօթափեց իին մարդը՝ մեղանչական մարդը իր վրայից, կրեց ամէն տեսակի տառապանք եւ նեղութիւն, ցեղասպանութեան ենթարկեց ու նահատակեց, քայլեց Գողգոթայի ճանապարհով, խաչ բարձրացաւ, թաղւեց Քրիստոսի հետ, բայց հաւատաց բացւող արշալյասին, հրաշափառ յարութեանը եւ յարութեամբ տրած նոր եւ առաւել կեանքին: Այսօր մենք ո՞՛ր ճանապարհից ենք քայլելու. իին մեղանչական կեանքի, թէ՝ յախտենական Արդարի՝ յարութեամբ նոր կեանք պարգեւող նոր Ադամի՝ Քրիստոսի ճանապարհից՝ յախտենական կեանքը եւ երջանկութիւնը ժառանգելու:

Ազգովին վերանորոգենք մեր հաւատը, յարութեան շնչով քայլենք դէպի պայծառ ապագայ, եւ յարութեան փառքով դէպի լուսաւոր ճանապարի:

* * *

Սիրելի՝ Հարազատներ,

Յարութեան լուսապայծառ այս առաւօտեան սրտանց ողջունում եմ բոլորի՝ հոգեւորականաց դասին, Պատգամատրական Ժողովի անդամներին, Կրօնական եւ Թեմական խորհուրդներին, ազգային-եկեղեցական մարմիններին, կրթական, բարեսիրական, կանանց, երիտասարդական, մարզական եւ մշակութային միութիւններին, կազմակերպութիւններին, ազգային վարժարանների եւ Կիրակնօրեայ դպրոցների ուսուցչական կազմներին եւ ուսանողութեան, Ծնողական խորհուրդներին, եկեղեցու սպասաւորներին, դպրաց դասերին, ազգային հաստատութիւններին եւ մեր ժողովրդի բոլոր զաւակներին՝ անխտիր:

**Քրիստոս յարեալ ի մեռելոց:
Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի:**

ՀՀ ՊՅԱ օձ. հՀ ԶԵՅԱՆ¹
ԵԱՅՅՅ ԹՅԱՅ Ա»ՆՑ

Ս. Զատիկի, 2014
Ս. Ամենափրկեան Վանք
Նոր Զուղա

ՈՂՋՈՒՅՆ ՁԵԶ, ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ

Հայոց Ցեղասպանութեան 99-րդ տարելիցն է: 99-րդ անգամն է, որ մենք ժամադրում ենք մեր նահատակների հետ: 99-րդ անգամն է, որ մենք յիշեցնում ենք աշխարհին եւ արինարբու թշնամուն՝ թուրքին, որ մենք չենք մոռացել մեր նահատակներին, չենք մոռացել նրանց թողած կտակը՝ պահանջատէր լինելու եւ շարունակելու մեր պայքարը:

Այսօր հարկ եմ զգում մեր ժողովրդի անունից ողջունելու մեր նահատակներին, ողջունելու բոլորին, չմոռանալով ոչ մէկին:

Ողջունում եմ՝ իմ տկար ձայնը միացնելով իմ ժողովրդի հզօր ձայնին՝ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի սեմին:

Ողջո՞յն ձեզ, Նահատակ հոգեւորականներ

Դուք մեր ժողովրդի ծոցից ծնած եւ ուռճացած անբաժանելի եւ բաղկացուցիչ տարրն էք մեր ժողովրդի:

Դուք եղաք հովիւր, ուսուցիչ, քարոզիչ, տեսուչ, խմբագիր, հեղինակ, բանաստեղծ ու երգիչ: Դուք եղաք մի ժողովրդի՝ հաւատի, մտքի, խօսքի եւ ուժի սերմնացանները:

Դուք եղաք մեր ժողովրդի արթուն եւ գիտակից պահակը, որն իսկ ձեզ դատապարտեց ամենադաժան մահապատճի:

Դժոխային վայրագութեան եւ ոճրագործութեան ահաւոր սպանդի մէջ ենթարկւեցիք թուրքի բռունքին, թքին ու մրին, պարզապէս որովհետեւ եկեղեցականի սքեմն էիք հագած եւ մանաւանդ ժողովրդին յոյս ու հաւատ ներշնչելու, տոկունութիւն քարոզելու «յանցանք»-ն էիք գործել: Հայութեան ուղղաւած առաջին հարածը ձեզ բաժին հասաւ: Արինարբու թշնամին իր սուրբ ձեր սրտին իրեց: Սակայն, դուք մնացիք պատճէշի վրայ, մնացիք հաստատ Ձեր հաւատքի, ազգային արժանապատութեան մէջ:

Այսօր 99 տարիներ յետոյ, երբ կանգնած ենք Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի սեմին, ձեր պատգամն է հնչում ուղղաւած հոգեւորականներին. «Մնացէք Ձեր կոշման մէջ հաստատ, եղէք հաւատարիմ ծառան մեր ժողովրդի, հաւատ ու յոյս ներշնչէք եւ ազգային արժանապատութիւնը բարձր պահէք»:

Ողջո՞յն Ձեզ, Նահատակ մտաւորականներ

Դուք մեր ժողովրդի միտքը արթուն պահող ջահա-

կիրները եղաք:

Դուք ջահիները եղաք՝ լոյս տուղ մեր ժողովրդի խորանին:

Դուք սերունդները դաստիարակող ուսուցիչները եղաք:

Դուք Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթեւի, Նարեկացիների, Ծնորհալիների հանճարեղ խօսքերը փոխանցողները եղաք:

Դուք եղաք ժայռացած պատւար՝ բոլոր տեսակի փորձութիւնների եւ փորձանքների դիմաց:

Դուք հետամուտ եղաք բարիին, իմաստունին, արդարին, վսեմին ու քաջութեան:

Հայոց լեզի, մշակոյթի, գիր ու գրականութեան սրբազն աւանդը, գաճար պահպանողները եղաք ու գալիք սերունդներին փոխանցելու հրամայականը ձեր պարտքը համարեցիք:

Սակայն, աւանդ, կիսատ մնաց ձեր աշխատանքը, փակեցին Ձեր շուրթերը եւ ձեզ աքսորեցին, կախաղան բարձրացրին ու գլխատեցին, անթաղ գերեզմանների վերածեցին:

Այսօր մեր մտաւորականները, ուսուցիչներն ու դաստիարակները, գիր ու գրականութեան մշակները ձեր կոչն են լսում. «Ձխուսափէք մեր աւանդից, այդ աւանդը փոխանցեցէք եկող սերունդներին, անտարբեր չկնելու հայ գրի, լեզի ու մշակոյթի նկատմամբ: Մնացէք ուահվիրաններն ու նիդրեալները՝ նոր սերունդներին հրաւիրելու արթութեան, իմաստութեան եւ հանճարեղ խօսքի իմացութեան:

Ողջո՞յն Ձեզ, Նահատակ հայրեր ու մայրեր

Դուք Աստիածածնի օրինութեամբ միացած անբաժանելի մի ուժ էք կազմում: Հայրը հիմքն է ու մայրը սիւնն է ընտանիքի: Դուք իրարով էք ամբողջանում:

Դուք եղաք ծնողներ պատմութեան, ծնեցիք սիրասուն զաւակներ ու պարգևեցիք մեր թորգոմեան ազգին:

Սիրելի հայրեր, դուք եղաք հերոսներ ձեր զաւակների համար, եղաք անպարտելի զօրութեան խորհրդանիշ: Դուք եղաք յոյսի, զգօնութեան, քաջութեան ու վստահութեան ներշնչարան ձեր զաւակների համար:

Դուք սիրելի մայրեր, եղաք խորհրդանիշը համբերութեան, սիրոյ, քնքութեան, նիդրման ու զոհողութեան: Դուք եղաք դաստիարակներ քրիստոնէական

արժեքների ու առաքինութիւնների: Դուք եղաք պաշտելի մայրեր, Դեր Զորի անապատների աւազների վրայ Այք, բեն, գիմ սովորեցրիք ձեր զաւակներին՝ դառնալով եկեղեցի ու դպրոց: Տարագրութեան ճանապարհին չկորցրիք ձեր հաւատը, կամքն ու սէրը ու կիսամեռ վիճակում պաշտպանեցիք ձեր զաւակներին՝ գիշատիչ գազաններից: Դուք տեսաք զրկանք ու ցաւ, տառապանք, բայց չկորցրիք ձեր ազնութիւնն ու բարութիւնը եւ մնացիք առաքինի մայրեր:

Նահատակ հայ մայրեր ու հայրեր, դուք խօսում եք այսօր ես մեր հայրերին ու մայրերին, որոնք լսում են ձեր ձայնը. «Հաւատարիմ մնացէք մեր բացած ճանապարհին, շդառնաք գերին հաճոյապաշտ կեանքի, այլ պահէք սրբութիւնը ընտանիքի, մնաք պահապանները հայկական սրբութեանց ու աւանդութեանց»:

Ողջո՞յն Ձեզ, Նահատակ պապիկներ եւ մամիկներ

Դուք վաստակաշատ եւ երախտարժան ծնողները ազգիս, դուք նաեւ անմասն չմնացիք ու ապրեցիք հայ ժողովրդի ճակատագրի դառն ու լեղի օրերը, տարիների ծանր բեռան տակ կրած դարձաք նահատակ՝ հեռու ձեր զաւակներից ու թոռներից:

Այսօր պապիկներն ու մամիկները լսում են ձեր պատգամը՝ «օրինութիւն, մեր օրինութիւնը բաշխեցէք ձեր զաւակներին ու թոռներին, որ մնան ուխտապահ եւ ամրօքն կառչեն մեր ազգային աւանդին ու արդար իրաւունքներին»:

Ողջո՞յն Ձեզ, Նահատակ մանուկներ՝ ու պատահիսեր

Դուք խորիրդանիշը եղաք անմեղութեան, մաքրութեան ու սրբութեան: Ձեր աչքերը բացեցիք հայ ընտանիքում ու դաստիարակեցիք քրիստոնէական արժեքներով ու ազգային վեհ գաղափարներով:

Դուք պիտի դառնայիք հայ ազգը ապագային տանող ու առաջնորդող լոյսն ու ապաւենը, սակայն արիւնարբու թշնամին՝ թուրքը, շխղճաց նաեւ ձեզ, ձեր մայրերի գրկից խլեց, ձեզ խոցոտեց ու դարձրեց օստարի սեփականութիւնը, դարձրեց որբ ու անտուն: Շատ-շատերդ մնացիք առանց հարազատ մօր կաթի ու սնունդի, անօթի ու ծարաւ՝ ձեր մայրերի գրկում հրաժեշտ տեցիք այս աշխարհին՝ բողբոջ ու ծաղիկ հասակում: Այժմ, խնդրում եմ, խօսէք մեր նոր մանուկներին ու պատահներին՝ դաստիարակելու հարազատ ծնողնե-

րի շնչով եւ նեռու մնալու քանդիչ ու վճասաբեր միջավայրերից: Խօսէք, որ նրանք հայ դպրոցը իրենց երկրորդ տունը համարեն՝ այնտեղ սնելու, ամելու եւ մեծանալու՝ արժանաւոր ժառանգորդը դառնալու Սահիակ-Մեսրոպների եւ նոր Վարդանների:

Ողջո՞յն Ձեզ, Նահատակ երիտասարդներ եւ զինուրներ

Դուք ստեղծագործ ուժն էք մեր ազգի, մեր ժողովրդի գոյութիւնն ու շարունակականութիւնն ապահովող գրաւականն էք: Աւաղ, թուրքի եաթաղանի տակ ընկաք, ձեր երազներ ին ու իղձեր ըզ դեռ չիրագործած: Դեռ «արեան կանչեր ունեիք ձեր սրտում, անկատար տենչեր»... Դուք հայրենի հողի պաշտպան հայ ազգի, պատի ու արժանապատութեան հսկիչներ... Սակայն, ականջ տալով ժողովրդի ձայնին, դուք եւս ասացիք. «Ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ պիտ մեռնի, բայց երանի՝ որ իր ազգի պատութեան կը զոհիի»: Ու զոհիեցիք, «Ընկաք, բայց չկորաք»: Այսօր ձեր ձայնին կարօտ է մեր երիտասարդութիւնը, լսում է ձեր պատգամը, որ հնչում է հարիւրամեակից ի վեր.

Արթուն, իմաստուն եւ քաջարի եղէք, երազ ու տեսիլք ունեցեք: Դժւարութիւններից չընկնաւք, այլ նեղութեանց դէմ պայքարէք, հայրենիքի հզօրացման գործին նապատէք, Հայ Դատի ու մեր ժողովրդի արդար իրաւունքների պահանջատէք եղէք: Քաջարի հայ զինուրներ, եղէք միակամ պաշտպանը հայ հողի: Քայլեցէք յաղթական, քայլեցէք անսասան եւ անպայման յետ բերէք Արարատը:

Այս է ճանապարհը հայութեան... յաւերժութեան:

Փա՛ռք Ձեզ սիրելի նահատակներ:

Կամք ու կորով ձեզ վեր յառնած զաւակներ ազգիս հայոց, շարունակէք պայքար՝ ի խնդիր մեր արդար իրաւունքների վերատիրացման, պայքար՝ ի խնդիր մեր ազգի արժանապատութեան, պայքար՝ ի խնդիր նոյն եւ մէկ ու ամբողջական հայութեան ու հայրենիքի:

ՀՀ ՊԱՌ ՕՇ ԱՇ ՋՇ ԱՇ ՋՇ
ՀԵՅ ՀԵՅ ՀԵՅ
ԵԱ ՀԵՅ ՀԵՅ ՀԵՅ ՀԵՅ ՀԵՅ

ՔԱԹՐԻՆ ԱՇՏՈՆԸ և ԱՄԵՆԱՓՐԿՅԱՆ ՎԱՆՔՈՒՄ

Երկուշաբթի՝ 2014 թականի մարտի 10-ին, երեկոյեան ժամը 4:30-ին, Ելրոմիութեան արտաքին քաղաքականութեան եւ անվտանգութեան հարցերով գերազոյն յանձնակատար Քաթրին Աշտոնը ժամանեց Նոր Զուլայի Ս. Ամենափրկչեան վաճքը՝ Ս.Ա. վաճռում Քաթրին Աշտոնին եւ նրան ընկերակցող պատկրակութեանը՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերջ. Տ. Բաբէն եաս. Զարեանի գլխաւորութեամբ, ոիմաւորեցին Շահինշահրի համայնքի հոգեւոր տեսուչ հոգջ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը, Պատգամաւորական ժողովի, Թեմական, Կրօնական եւ այլ մարմինների ատենապետերը եւ ներկայացուցիչները:



Պատուիրակութեան անդամները նախ այցելեցին որմանկարներով զարդարւած, 350-ամեայ վաղեմութիւն ունեցող Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ցովսէփ Արեմաթացի» եկեղեցի, որտեղ Վանքի «Կոմիտաս» երգչախումբը խմբավարութեամբ պրն. Արմէն Ամիրիխսանեանի հանդէս եկաւ Ս. Պատարագից «Մարմին տէրունական», «Քրիստո ի մէջ մեր յայտնեցաւ»եւ «Սուրբ, սուրբ» երգերով եւ իր ելոյթն աւարտեց «Կիրիկիա» երգով: Տկն. Քաթրին Աշտոնը եւ պատուիրակութեան անդամները հիացմունքով ունենդրեցին Ս. Պատարագից երգաւած կոորները, ապա հմայած դիտեցին եկեղեցու գունազարդ որմանկարները:

Այնուհետեւ պատիրակութեան անդամները բարձրացան Վաճռի Ծաղկեայ դահլիճ, ուր առաջնորդ Սրբազնը բարի գալստեան խօսք արտայայտելով հիւրին եւ պատիրակութեան միւս անդամներին, անդրադարձաւ իրանահայութեան կեանքին ու նրանց ունեցած առաւելութիւններին ու իրաւունքներին։ Բացատրեց թէ ինչպիսի կազմակերպ համայնքներ են, եւ որ ինչպիսի ակտի կեանք են վարում հոգեւոր, ազգային ու մշակութային ոլորտներում։ Նա մատնանշեց կառավարութեան հետ սերտ յարաբերութեանը եւ Եերկայացուցեց Իրանը որպէս համագոյակցութեան երկիր եւ նշեց, որ 400 տարիներից ի վեր հայերը, որպէս քրիստոնեաներ, իսլամ եղբայրների ու քյորերի հետ ապրել են յարգանքով եւ սիրով։ Սրբազն Հայոց շնորհակալութիւն յայտնեց Եւրոմիութեան խորհրդարանին Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու կապակցութեամբ, միաժամանակ անդրադարձաւ Մարդու իրաւունքների Եւրոպայի դատարանի միջոնը՝ Շլեզվարիայի դատարանի կողմից դատապարտած թուրք գործիշ Դողու Փերինչէքի արդարացման վճոին, յիշեցնելով, որ մէկ ամիս առաջ Մեծի տաճան Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը, մի

Աամակով բողոքարկել է Ծիցարիայի արդարութեան նախարարութեանը՝ ընթերցելով Վեհափառ Հայրապետի նամակից մի հատուած:

Սրբազն Հայրն իր խօսքի շարունակութեան մէջ կարեւորութեամբ ընդգծեց, որ Իրանի պետութիւնը միշտ զօրակցել է մեզ՝ մեր Եկեղեցիների ու մշակութային կոթողների պահպանման գործում, մինչդեռ սրանց մի քանի տարի առաջ հարեւան Ադրբեջանում ազերիներն աւերտցին Հին Զուղայի պատմական արժեք ներկայացնող խաչքարերը, որն ինքնին մշակութային ցեղասպանութիւն է: Թեմակալ Առաջնորդն աւարտելով իր արտայալութիւնները՝ յոյս յայտնեց, որ Երրոխորհրդարանը կը բարձրաձայնի այս մասին, կը ճանաչի մարդկային իրաւունքները եւ կը դատապարտի նման արարքները, որպէսզի այլևս չթողլատրեն նման ցեղասպանութիւնների շարունակութիւնը այլուր:

Սրբազն Հօր խօսքերից յետոյ արտայալուց Տէկն. Քարթին Աշտոնը, վստահեցնելով, որ անպայման հետեւելու եւ պաշտպանելու է մարդկային իրաւունքները և ներկայացւած խնդիրները:

Պաշտօնական հանդիպման աւարտին առաջնորդ Սրբազն Հայրը յանուն ազգային իշխանութեան յուշանելիքներ յանձնեց Քաթրին Աշտոնին: Ապա պատկրակութեան անդամներն այցելեցին «Խաչատուր Կեսարացի» անւան թանգարանը, որտեղ առաջնորդ Սրբազն Հայրը Հայոց ցեղասպանութեան տաղաւարի առջեւ երկար բացատրութիւններ տալով իրագործած ոճի վերաբերեալ, քարտէզի վրայ ցոյց տվեց այն վայրերը, որտեղ իրագործել են Հայոց ցեղասպանութիւնը, ինչպէս նաև Դեր-Զորից բերւած նահատակների աճիւնների բեկորները: Սրբազն Հայոն անձամբ բացատրութիւններ տվեց նաև թանգարանում գտնուղ այլ իրերի մասին:

Վերջում յարգելի հիւրը գրառում կատարեց թանգարանի յուշամատեանում, այնուինեւ թանգարանի մուտքի առջեւ պատվիրակութեան անդամներն առաջնորդ Սրբազն Հօր եւ ազգային մարմինների հետ հաւաքական լուսանկարւելուց յետով, հրաժեշտ տուեցին:

**ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ
ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵՒ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ
ՀԱՅՈՅ ԴՊՐՈՑՆԵՐ ԵՒ «ԱՐԱՐԱՏ»
ՄԻՈՒԹԵԱՆ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ
ՄԱՍՆԱԾԻՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՄՐԱՀ**



Երկուշաբթի՝ 2014 թվականի մարտի 10-ին, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը, ընկերակցութեամբ Թեմական եւ Կրթական խորհուրդների ատենապետեր այն. Նոէլ Միհնասեանի եւ դկտ. Վաշիկ Հայրապետեանի, այցելեցին Նոր Զուղայի եւ Շահինշահրի հայոց կրթական օչախները: Նոր Զուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրում խումբն այցելեց տարբեր օղակների դասարաններ, որտեղ աշակերտներին իր օրինութիւնը փոխանցեց առաջնորդ Մրբազան Հայրը՝ նրանց քաջալերելով աշալուրշ եւ հետեւողական կերպով զբաղւեն ուսումնառութեամբ, վստահեցնելով, որ ազգային իշխանութիւնը ամէն կերպ նեցուի է կանգնելու դպրոցների կրթական աշխատանքներին եւ աշակերտութեանը:



Այցելութեան արդինքում, առաւել ծանօթանալով դպրոցների եւ կրթական ոլորտի խնդիրներին, դրանց լուծման գծով մի շարք կարգադրութիւններ եղան:

Նոյն օրը պատմիրակութիւնն այցելեց Շահինշահր եւ հանդիպում ունեցաւ հայոց դպրոցի աշակերտների հետ, այնուհետեւ Շահինշահրի հայ համայնքի վարչութեան գրասենեակում տեղի ունեցաւ հանդիպում վարչութեան հետ, որի ընթացքում քննարկեցին համանքի մի շարք հարցեր:

Պատմիրակութիւնն այցելեց նաև Ն.Զ. հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի հա-

մար կառուցւող եռայարկ շենքի վայրն ու ակամատես եղաւ շինարարական աշխատանքների ընթացքին:



**ՄԻԶ-ԹԵՄԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆՈՐ
ԶՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ**

Ուրբաթ՝ թվականիս մարտի 14-ին, Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանքում, Երևկայութեամբ Սպահանի եւ Աստպատականի հայոց թեմների թեմակալ առաջնորդների, իրանահայ երեք թեմների Թեմական խորհուրդների եւ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման կենտրոնական մարմինների ատենապետների ու Հայ դասի յանձնախմբերի Երևկայացուցիչների, տեղի ունեցաւ միջթեմական հանդիպում Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի ծրագրերի համադրութեան օրակարգով: Հանդիպման ընթացքում քննարկեցին 100-ամեակի ոգեկոչման ձեռնարկների ծիրում երեք թեմների ծրագրերը եւ համադրութիւններ կատարեցին համատեղ իրագործելի աշխատանքների շուրջ:



Ժողովականները բարձր գնահատեցին միջթեմական նման հանդիպումների կազմակերպումը եւ անհրաժեշտ գուան դրանց շարունակութիւնը, որը նպաստելու է համայնքային եւ համազգային նշանակութեամբ ծրագրերի առաւել արդինաւետ իրականացմանը:

**Ե Հ Յ Յ Ե Շ Ո Յ Շ
 Ե Հ Յ Ո Յ Շ Ո Յ Շ Ո Յ Շ
 Ե Հ Յ Ո Յ Շ Ո Յ Շ Ո Յ Շ
 Ե Հ Յ Ո Յ Շ Ո Յ Շ Ո Յ Շ
 Ե Հ Յ Ո Յ Շ Ո Յ Շ Ո Յ Շ**

2014 թւականի ապրիլի 6-ին, ոչ կառավարական (NGO) «Օմաթէ վահեղէ» կազմակերպութեան եւ Թեմական Խորհրդի համագործակցութեամբ, Ս. Ամենափրկչեան վանքում տեղի ունեցաւ Սիրիայի խաղաղութեան ուխտաւորների նախաձեռնութեամբ կազմակերպած «Կրօնների սրտակցութիւնը Սիրիայի խաղաղութեան համար» խորագրով համաժողովը:

Ս. Ա. Վանք ժամանած Սիրիայի խաղաղութեան ուխտաւորների պատիրակութեանը մաս էին կազմում Աւատրալիայի «Վիկի լիկո» կուսակցութեան նախագահ Զան Շիփրոնը, Աստրալիացի հոգեւորական Դէվ Սմիթը, Սիրիայում խաղաղութեան հաստատման գործընթացի ներկայացուցիչ քոյր Մարիամ Ագնեսը, եւ խաղաղութեան նորելեան մրցանակակիր Մայրիդ Մըքվայերը: Նրանց ընկերակցում էին Իրանի հոգեւորական եւ հասարակական-մշակութային բարձրաստիճան պաշտօննեաներ գործիչներ:

Պատիրակութեանը Ս. Ա. Վանքում դիմաւորեցին Իրանի իսլ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր պր. Ռոբերտ Բեգլարեանը, Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերն ու ներկայացուցիչները:

Նախ Ս. Ամենափրկչեան վանքի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցում արժն. Տ. Մերոպ աւ. քին. Գալստանեանի եւ արժն. Տ. Վազգէն քին. Քեօշկերեանի միջոցով եւ «Կոմիտաս» երգչախմբի երգեցողութեամբ տեղի ունեցաւ Հոգեհանգստեան արարողութիւն՝ Սիրիայի ներքին պատերազմի ընթացքում զոհաւածների հոգիների, ինչպէս նաև համայն աշխարհի խաղաղութեան համար:

Արարողութեան աւարտին պատիրակութեան անդամ հոգեւորականները պարսկերէն, արաբերէն եւ անգլերէն լեզուներով աղօթեցին առ աստιած՝ աշխարհի խաղաղութեան եւ բռնութիւնների վերացման համար:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, Ս. Ա. Վանքի Ծաղկեայ դահլիճում տեղի ունեցաւ համագումարը, ներկայութեամբ Իրանի իսլ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր պր. Ռոբերտ Բեգլարեանի, ազգային մարմինների ներկայացուցիչների, այլ երկրներից ժամանած հիւրերի, իրանցիների եւ Սպահան քաղաքապետ ճրտգ. Ասազադեգանի: Համագումարի ընթացքում ելոյթ ունեցան չորս անձինք:



Ակզերում արտավայտեց պր. Ռոբերտ Բեգլարեանը նշելով, որ հայերը որպէս ցեղասպանութեան զոհ, զգայուն լինելով գաղթականութեան ու հայածանքի նկատմամբ, Սիրիայի ներքին խորվութիւնների առաջին իսկ օրից դատապարտել են խաղաղ բնակչութեան դէմ բռնութիւններն ու արիւնահեղութիւնները: Նա յայտնելով, որ Իրանի հայ համայնքը հարիւրամեակների ընթացքում աշխոյժ ներկայութիւն է ունեցել մշակութային, հասարակական, գիտական եւ տնտեսական ոլորտներում, ինչը գնահատել է Իրանի ժողովորի կողմից, յաւելեց, որ Իրանում հայերն ապրել են խաղաղ համակեցութեան պայմաններում:



Պր. Բեգլարեանը դիմելով Սիրիայի խաղաղութեան ուխտաւորներին, ասաց. «Ենթակա ժողովուրդի ուժի վրայ, պէտք է փորձել ելքեր գտնել ստեղծւած կացութիւնից փրկւելու համար Սիրիայի ժողովրդի կողմից ընդունելի պայմաններով, առանց արտաքին ուժերի ու բռնակալների միջամտութեան եւ արիւնահեղութեան: Ցաւօք մենք ականատես ենք, որ բռնակալները ժողովրդի տարածքից թափանցում են Սիրիայի հայարնակ շրջաններ եւ անտեսերով մարդկային արժէքները ոճիրներ են գործում: Մենք, Իրանի ժողովրդի հետ միասին, ցաւակցում ենք սիրիացիներին եւ դատա-



պարտում այդպիսի ոճրագործութեան-ները»: Պրճ. Ռոբերտ Բեգլարեանը բարձր գնահատեց պատվիրակութեան անդամների աշխատանքն ու նիրումը եւ շնորհաւորեց նրանց՝ «Խաղաղութեան ուխտաւոր»-ի պատվար կոչումին արժանանալու համար:

Ցաջորդ ելոյթով հանդէս եկաւ արժճ. Տ. Վազգէն քին. Քէօշկէրեանը, ով իր խօսքերի մէջ ողջունելով ուխտաւորների ներկայութիւնը 400-ամեայ Ս. Ամենափրկչեան վանքում, յայտնեց. «Ճաւոք Սիրիայում տեղի ունեցող դէպքերն ու ծայրահեղականների գործած ոճիները խիստ բացասական ազդեցութիւն են թողել Սիրիայի ժողովրդի վրայ: Այսօր աւերման է ենթարկել Սիրիան, որը ժամանակին ապահովութեան, սիրոյ եւ խաղաղ համագոյակցութեան նախանձելի օրինակ էր հանդիսանում, եւ որտեղ զանազան կրօններին ու ազգերին պատկանող բնակիչներն ապրում էին կողք-կողք՝ եղբայրաբար եւ համերաշխութեամբ»: Արժճ. Տէր Հայրը խօսքն ուղղելով պատվիրակութեան անդամներին, ողջունեց նրանց նախաձեռնութիւնը եւ յոյս յայտնեց, որ նրանց մարդասիրական ծառայութիւններն ու գաղափարներն ընկալելու են ազատատենչ ժողովուրդների եւ բոլոր այն պետութիւնների կողմից, որոնք Սիրիային այսօր իրավիճակին են մատնել:

Համագումարի շարունակութեան մէջ արտայայտեցին նաև Սպահանում «Մահիէ Մօուր» հիմնարկութեան գրասեմեակի պատասխանատու հոջաթօլէսլամ Վալիփուղը եւ Աստրալիացի հոգետրական Դէվ Սմիթը, ովքեր նոյնպէս դատապարտելով բռնութիւնները, մարդկային ազատութիւնն ու խաղաղութիւնը ուժնակիխող բոլոր արարքները, անհրաժեշտ համարեցին եղբայրասիրութեան եւ փոխադարձ յարգանքի տարածումը աշխարհում:



Համագումարի աւարտին մասնակիցներին ներկայացւեց հանդիպման համար պատրաստած խաղաղութեան յուշապատկերը:

Վերջում, պատվիրակութեան անդամներն ու հիւրերը այցելեցին Ս.Ա. Վանքի «Խաչառու Կեսարացի» անան թանգարան:

Նշենք, որ սոյն պատվիրակութիւնը կազմած է աշխարհի զանազան երկրների աշխարհահոչակ եւ խաղաղասէր հոգեւորականներից ու աշխարհականներից, ովքեր Սիրիայում խաղաղութիւն հաստատելու նպատակով քարոզարշաւներ են կազմակերպում զանազան երկրներում եւ Սիրիայի ներքին պատերազմի գաղթականների եւ տուժած սիրիացիների համար օգնութիւններ հաւաքում:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ՀԱՄԱՀԱՒԱՔ՝ ԸՆԴԴԵՄ ՔԵՍԱԲՈՒՄ ԹՐԳՎԱԿԱՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

Երեքշաբթի՝ ապրիլի 15-ի առաւօտեան ժամը 11:00-ին, նախաձեռնութեամբ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի եւ կազմակերպութեամբ «Ուորէն» երիտասարդական միութեան, երիտասարդական բողոքի համահաւաք կայացաւ Սպահան քաղաքի Մոթահանի կենտրոնական պողոտայի վրայ գտնող «Turkish airlines»-ի գրասենեակի առջեւ՝ ի բողոք Թուրքիայի հովանաւորութեամբ Սիրիայի Լաթաքիա շրջանի հայարնակ Քեսար քաղաքի վրայ կատարող ուազմական գործողութիւնների եւ ի պաշտպանութիւն սիրիահայութեանը:



Շուրջ մէկ ժամ տեւողութեամբ համահաւաքի ընթացքում դատապարտանքի վանկարկումներով ու պաստառներով՝ բողոքարկողներն իրենց ցասման ու զայրոյթի ձայնը միացրին համայն հայութեան պահանջատենչ ձայնին:



Համահաւաքի շարունակութեան մէջ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգէ, S. Անանիա Վրդ. Գումանեանն անդրադառնալով վերջերս Քեսաբում տեղի ունեցածին՝ կարեւորութեամբ ընդգծեց, որ հայը յարութիւն առնող ժողովուրդ է եւ նման երիտասարդներով կանգուն է եղել ու պէտք է յարատեի՝ ի շահ մեր ընդհանուր գաղափարների ու պահանջատիրութեան: Հայր Սուրբն աւելացրեց նաեւ, որ համայն հայութիւնը չի լուլու կատարածի կապակցու-

թեամբ եւ տէր է կանգնելու քեսաբահայութեանն ու աջակցելու է նրանց: Նա իր խօսքը եզրափակեց՝ պահաջելով թուրքից ծունկի գալ հայի առջեւ եւ ներողութիւն խնդրել կատարածի համար:



Հայր Սուրբի խօսքին յաջորդեց օրուայ բանաձեւի ընթերցումը, որտեղ դատապարտելով Թուրքիայի ուննագութիւնները Սիրիայի՝ ի մասնաւորի Քեսար քաղաքի Ակատմամբ, Մ.Ա.Կ.-ից եւ մարդու իրաւումները պաշտպանող միջազգային կազմակերպութիւններից պահանջում էր կանխել Թուրքիայի աջակցութիւնն ու հովանաւորութիւնը տերորիստացրայեղական խմբաւորումների ոճրագործութիւնների իրականացման ուղղութեամբ, իսկ Իրանի պետութիւնց խնդրում էր իր դիւանագիտական բոլոր հնարաւորութիւնները ի գործ դնել՝ տարածաշրջանի քրիստոնեաների ու մուսւլմանների խաղաղ համակեցութեան համար:

Վերջում մասնակիցները տեղափոխվեցին U. Ամենափրկչեան վանք, որտեղ Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշաւակն յաւերժացնող յուշարձանի մօս կատարեց ծաղիկների մատուցում:

Համահաւաքին ներկայ էին նաեւ շոշանի Հայ դատի յանձնախմբի անդամները, S. Վարդան քհնյ. Աղաբարայանը, «Ուորէն» երիտասարդական միութեան եւ նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Ուսանողական միաւորի անդամները, հայոց ազգային դպրոցների աւագ աշակերտներ ու համայնքի անդամներ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԻՐԱԾԻ ՀԱՐԱԽՁԻՆ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՀԵՏ



Չարբարձր 2014 թւականի ապրիլի 19-ի առաւտեան, գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի գլխաւորութեամբ, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ներկայացուցիչներից բաղկացած մի պատվիրակութիւն, Սպահանի «22 Բահման» հիւրանոցում հանդիպում ունեցաւ Սպահան, Եազդ եւ Զիարմահալ նահանգների բանակի ընդհանուր հրամանատար Ռեզա Զեհադիի եւ զինուրական բարձրաստիճան հրամանատարների հետ, ովքեր իմի էին եկել տօնելու Իրանի Բանակի օրը եւ գնահատելու արժանի հրամանատարներին ու բանակայիններին: Հանդիպմանը ներկա էին տասնեակ բարձրաստիճան սպաներ ու գնդապետեր:

Գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը ուրախութիւն յայտնելով ստեղծած առիթի կապակցութեամբ, իր շնորհաւորանքը փոխանցեց Բանակի օրիա առթիւ եւ գնահատեց ու մեծարեց բանակում ծառայող բոլոր

զինուրմերին եւ սպաներին, ովքեր իրենց կեանքի գնով ապահովում են հայրենիքի ամբողջականութիւնն ու անվտանգութիւնը: Սրբազն հայրը ողջունելով նաև իրանական Մայրերի օրայ կապակցութեամբ, յայտնեց, որ իրանցի մօր կրթած եւ դաստիարակած պատասխանատու եւ յանձնառու քաջամարտիկների, ինչպէս նաև երկրի առաջնորդ Այաթոլլահ Խամենէյի եւ քաղաքական այլ ղեկավարութեան խորհմութեան ու հետատեսութեան շնորհիւ, Իրանը ոչ միայն համարում է տարածաշրջանում քաղաքական, ռազմական եւ տնտեսական հզօր ուժ, երաշխաւորելով իր ժողովրդի խաղաղութիւնն ու ապահովութիւնը, այլ նաև միաստածեան կրօնների համագոյակցութեան վառ ու գեղեցիկ օրինակ, որի մասին ամենուրեք միշտ վկայել է ինքը:



Բանակի ընդհանուր հրամանատար՝ Ռեզա Զեհադին, շնորհակալական խօսքերից յետոյ, ողջունեց հայութեան գործօն ներկայութիւնը իրանի ամբողջականութեան, գերիշխանութեան եւ հզօրութեան ուղղութեամբ ծառայող զանազան աշխատանքների մէջ, եւ յիշելով Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում նահատակած հայ զինուրներին՝ մեծապէս արժեւորեց այն միակամ կեցւածքը, որը դրսեւորում են իրանեան ժողովրդի տարբեր խաւերն ու ազգութիւնները:



ԲԱՂԱՐԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՑ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱԿԻ ՏԵՂԻՆՈՒԹԵԱՆՑ

Երկուշաբթի՝ 2014 թւականի ապրիլի 21-ին, Սպահանի հայոց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի գլխաւորութեամբ, Պատգամաւրական ժողովի դիւանի եւ Թեմական խորհրդի աստենապետեր պրներ. Վարուժ Մինասեանը եւ Նոել Մինասեանը, Թեմական խորհրդի անդամ եւ Սպահանի պետական համալսարանի Հայագիտական ամբիոնի դասախոս տկն. Քառողին Դիլանչեանը, Թեմական խորհրդի գործակար պրն. Արթին Մուրադեանը եւ Հայագիտական ամբիոնի դասախոս պրն. Ռազմիկ Տէր Մկրտչեանը, քաղաքավարական այցով հանդիպեցին Սպահանի պետական համալսարանի նորանըշանակ տնօրէնի՝ դկտ. Թավերի հետ: Հանդիպմանը ներկա էին նաև համալսարանի տնօրէնի խորհրդա-

կան դկտ. Իռաւանին եւ համալսարանի միջազգային յարաբերութիւնների տնօրէն դկտ. Շահինը:



Թեմակալ առաջնորդը շնորհակալութիւն յայտնելով ընդունելութեան համար, իր եւ ազգային իշխանութեան անունից շնորհաւորանքի խօսք փոխանցեց համալսարանի ղեկավարութեանը՝ դկտ. Թալեբին, իր պաշտօնի մէջ նոր նշանակելու եւ իրանական նոռուգի կապակցութեամբ, նաեւ այցելութեան նպատակներից համարեց Ազգային առաջնորդարանի եւ համալսարանի միջեւ գոյութիւն ունեցող համագործակցութեան ամրապնդումը:

Գերշ. Սրբազն Հայրն անդրադարձաւ առաւելքան 50 տարի գոյատեսող Հայագիտական ամբիոնի մասին եւ յիշեցրեց այն նախնական համաձայնութեան կապակցութեամբ, որ Ազգային առաջնորդարանն ունեցել էր համալսարանի նախկին տնօրինութեան հետ՝ ամբիոնի մակարդակը մինչեւ դոկտորայի բարձրացնելու կապակցութեամբ, որի մէջ զգալի եւ կարեւոր դեր է վերապահւած Իրան-Հայաստան բազմակողմանի յարաբերութեանը:



Գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանն առիթը պատեհ համարելով եւ նկատի ունենալով ապրիլեան ձեռնարկ-ների ընթացքի մէջ լինելը, համալսարանի ղեկավարութեանը փոխանցեց Հայոց ցեղասպանութեան մասին եւ ոգեկշման աշխատանքների վերաբերեալ տեղեկութիւններ եւ յիշեցրեց Սիրիայում տեղի ունեցող իրադարձութիւնների մէջ Թուրքիայի նոյն հակամարդկային կեցւածքի դրսեւորման մասին։ Առաջնորդ Սրբազն Հայրը դիտել տեց, որ նման անմարդկային արաբներ կանխելու համար համամարդկային եւ միշագային ճիգ ու աշխատանք է պէտք, եւ այս ուղղութեամբ Սպահանի պետական համալսարանն ունի այն ուժականութիւնը եւ հնարաւորութիւնները, որոնցով դրական քայլեր կարող է կիրառել Հայոց ցեղասպանութեան դատապարտման ուղղութամբ։

Սպահանի պետական համալսարանի տնօրէն դկտ. Թալեբին ուրախութիւն յայտնելով պատիրակութեան այցելութեան առթիւ, շնորհակալութիւն յայտնեց համալսարանի հետ համագործակցելու ուղղութեամբ ազգային առաջնորդարանի դրական եւ հետեւողական կեցւածքի համար եւ ողջունելի համարեց այն իրականութիւնը, որ իրանական համալսարանի հետ

համագործակցութեան առաջին երեւոյթներից է համարում հայագիտական ամբիոնի ստեղծումը Սպահանի պետական համալսարանի մէջ։ Պրճ. Թալեբին տեղեկութիւններ փոխանցեց հայագիտութեան ամբիոնի կապակցութեամբ համալսարանի տնօրինութեան ունեցած յատով ուշադրութեան եւ Երեւանի պետական համալսարանի հետ ծաւալած յարաբերութիւնների մասին, որը խթան է հանդիսանալու Հայագիտական ամբիոնի կրթական մակարդակի բարձրացմանը։ Նա միաժամանակ շեշտեց, որ ամբիոնի ուսանողութեան թիվ բարձրացումը նպաստելու է նրա արդիւնաւութեան ընթացքի վրայ, որի համար անհրաժեշտ է յատկապէս հայ նոր ուսանողների ներգրաւումը, ինչի համար կարիք է առաջնորդարանի ծանուցողական եւ քարոզչական օժանդակութիւնը։



Հանդիպման աւարտին Ազգային առաջնորդարանի կողմից յուշանելք փոխանցեց համալսարանի նորանշանակ տնօրէնին եւ երկու կողմերը հրաժեշտ տեղին իրար:



ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՍՊԱՀԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Զորեցաբթի՝ 2014 թւականի ապրիլի 23-ի կեսօրից յետոյ ժամը 5-ին, Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի գլխաւորութեամբ, Պատգամաւորական ժողովի փոխառենապետից, Թեմական եւ Կրօնական խորհուրդների առենապետերից եւ անդամներից բաղկացած պատկրակութիւնն այցելեց Սպահանի նահանգապետարան: Հանդիպումը տեղի ունեցաւ նահանգապետարանի պաշտօնական ընդունելութիւնների «Աշրաֆի» սրահում:



Առաջնորդ Սրբազն Հայրը նահանգապետին շնորհաւորեց նոուզի, բանակի եւ կնոջ օրերի կապակցութեամբ եւ իր մտածումները փոխանցեց այդ ուղղութեամբ: Գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը խօսելով քննութեան նորացման եւ գարնանային վերազարթօնքի մասին, այն մարդու հոգու եւ մտքի վերանորոգման եւ առ Աստած դարձի ու առաւել մերձեցման լաւագոյն արիթը համարեց եւ յիշեցրեց, որ մեր եկեղեցու տօնական օրերի արարողութիւնների ընթացքում, որոնք այս տարի գուգադիմել էին նոուզի օրերին, երկրի բոլոր պատասխանատունների համար աղօթք է մատուցել բարձրեալ Աստծուն:



Առիթը պատեհ համարելով, առաջնորդ Սրբազն Հայրը յատուկ շնորհաւորանք ուղղեց երկրի հզօրութեան, ամբողջականութեան եւ ապահովութեան ճանապարհին նիդրածութեամբ ծառայող բանա-

կայինների օրույ կապակցութեամբ, նաև շնորհաւորեց իրանական կնոջ օրույ առթիւ, մեծարելով բոլոր այն մայրենին ովքեր դաստիարակում են այնպիսի գիտակից սերունդ, որը պատրաստ է ամբողջական անձնազնութեամբ եւ սիրանքով երկրի սահմանների անձնութեան համար նոյնիսկ իր կեանքն ընծայաբերել:

Ապրիլեան Մեծ եղենի տարելիցի ոգեկոչման օրերում գտնելով, թեմակալ առաջնորդն անդրադարձաւ Հայոց ցեղասպանութեան խնդրին եւ Թուրքիայի կառավարութեան ժխտողական ու հայտեաց քաղաքականութեանը, որը շարունակում եւ այսօր իր դրսեւորումն է ունենում Սիրիայի հայարնակ շրջաններում, յատկապէս քեսաբահայութեան դէմ գործադրած բռնութիւններում:

Սպահանի նահանգապետ պրն. Ռասուլ Զառգառվուր յիշեցնելով, որ իր պաշտօնավարութեան եօթ ամիսների ընթացքում սա երրորդ հանդիպումն է իր եւ ազգային առաջնորդարանի պատասխանատունների միջև, այդ երեւոյթը համարեց համագործակցութեան եւ սերտ յարաբերութեան փաստ ու վկայութիւն, որը մեծապէս գնահատելի է եւ ցանկալի: Նա շնորհակալութիւն յայտնելով շնորհաւորանքների համար՝ շեշտեց, որ Իրանն իր բոլոր հնարաւորութիւններով ու պետական համակարգով միշտ իր գօրակցութիւնն է ցուցաբերել արդար իրաւունքների պաշտպանութեան եւ բռնութիւնների դէմ գործողութիւններում:

Անդրադարձանալով նախկին տարիներում Երեւան կատարած իր այցերին, Սպահանի նահանգապետը յայտնեց, որ Երեւանում այցելել է հայոց զոհերի թանգարան, որտեղ լաւագոյն պատկերել են 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան ընթացքում հայերի համար պատահած դէպքերը եւ ներկայացւել են հազլադէպ ու փատացի վկայագրեր:

Ցաւ յայտնելով սիրիահայերի, Օրանց տների ու եկեղեցիների դէմ կատարած յարձակումների կապակցութեամբ, Ռասուլ Զառգառվուր ասաց. «Զի կարելի յարգել այն մարդկանց, որոնց համար կարեւոր չեն աստածային կրօններն ու մարդկային արժեքները»:

Đ²Úàò ð°Ô²éä²ÜàòÂ o²Ü 99-đ, i²ð°ÈÀØÆ ²è ÂÆô Üàð
æàòÔ²ÚÆ ä²Ð²Üæ²î ¾đ ²Þ ²Î °đî àòÂ o²Ü Ø²éÜ²Î òàòÂÆôÜÀ
ì²Ôî °Ø²î àÚØÆ ²đ²đàÔàòÂ o²ÜÀª

Նոր Զուղայի հայոց ազգային դպրոցների աշակերտութիւնը Եղեռնի բիլրաւոր նախատակների անմոռաց յիշատակին իր յարգանքի տուրքը մատուցելու նպատակով՝ ուղեկցութեամբ դպրոցների տեսչութիւնների, ուսուցական կազմերի եւ ծնողական խորհուրդների, պահանջատիրական կարգախօսների վաճկարկումով ու պատառներով, պատկան դպրոցներից քայլեցին դէպի Ս. Ամենափրկիչ վաճնք, որտեղ մէկ եւ կէս միլիոն անմեղ զոհերի յիշատակը յաւերժացնող յուշարձանի առջեւ առանձնաբար կայացաւ ծաղիկների մատուցման արարողութիւն:

Ստորև ներկայացնում ենք սովորական միջոցառութեամբ մանրամասնութեամբ.

Երեքաբթի՝ ապրիլի 22

Առաջարկեան ժամը 10:30-ին, Նոր Զուղայի Հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի սաները՝ վեր բարձրացրած բողոքներով եւ լոգունգներով մուտք գործեցին Ս.Ա. վանք՝ ծաղկիներ մատուցելով անմեր զոհերի յիշատակին կառուցած յուշարձանին։ Թոթովախօս մանուկներն ելոյթ ունեցան պահանջատիրական եւ հայրենասիրական արտասանութիւնների ու խմբական երգերի կատարմամբ։



Աշակերտական ելոյթից յետոյ, Սպահանի հայոց թեմի առաջնորդ S. Բարգէն եպս. Չարեանը ողջունելով մանուկների ներկայութիւնը ծրագրին՝ ասաց. «Քիչ առաջ դուք երգեցիք, արտասանեցիք եւ լոգունգներ տվեցիք: Ձեր ձայնն ուժեղ է եւ լսում է ամբողջ աշխարհը, լսում է նաև թուրքը: Ուրախ ենք, որ ձեզ նման փոքրիկներ ունենք, ովքեր չեն մոռացել նահատակներին եւ յիշում ու յիշեցնում են մեր արդար իրաւունքները. քանի դեռ կան ձեզ նման բալիկները, թշնամին չի կարող տիրանալ մեր իրաւունքներին»:

Վերջում դպրոցի կողմից երկու աշակերտներ ծաղկերով պատաժ խորհրդանշական Ծիծեռնակաբերդը տեղադրեցին յուշարձանի մօս, իսկ իւրաքանչիւր սան առանձին ծաղիկ մատուցեց նահատակների լիշտառակին:

Նոյն օրը՝ կէսօրին ժամը 12-ին, հայոց ազգային

«ԱրմԵն» տարրական երկսեռ կրթահամալիրի աշակերտութիւնը, ովքեր պահանաջատիրական լոգունգներով զարդարւած եռագոյն էին ամրացրել իրենց բազուկներին, ներկայացան Ս.Ա. վաճք, ուր տեղի ունեցաւ ծաղկվերի մատուցման արարողութիւնը:



Ծրագիրը մեկնարկեց աշակերտական ելոյթներով, որտեղ նախ «Մենք չենք մոռացել» երգի մենակատարմամբ հանդէս եկաւ Դվին Յովհաննիսեանը: Ապա հայերէն լեզուվ աշակերտական խօսքն ընթերցեց Արեգ Յարութիւնեանը, պարսկերէնով՝ Ալմարա Թահմագեանը, իսկ անգլերէն լեզուվ՝ Մինելի Ղազարեանը: Աշակերտական ելոյթների շարանում Վարանդի «Եղեռնագործներին» ստեղծագործութիւնը հատւած առ հատւած ասմունքեցին Մենուա Քեշիշեանը, Քրիստին Մարկոսեանը, Նժդիկ Սիմոնեանը, Տարենիկ Տէր-Մարտիրոսեանը եւ Թոմիկ Մարկոսեանը, իսկ Ծաղկանուշ Շատուրեանի «Քայլէք դուք միշտ հաստատուն» ստեղծագործութիւնը՝ Լուսին Յովսէփեանը, Շանթ Մելքոնեանը, Նինէ Բարդեանը եւ Միեր Գուրգէնեանը: Գեղարևստական ելոյթները եղարափակւեցին «Հակա երկիր էր» երգի կատարմամբ՝ բոլոր աշակերտների միջոցով:

Այնուհետեւ իր հայրական օրինանքը փոխանցեց Առաջնորդ Սրբազն Հայրը: Նա անդրադառնալով մինչեւ այսօր Թուրքիայի կողմից իրականացող հակահայ գործողութիւններին՝ ի մասնաւորի Սիրիայի Քեսար հայաբնակ քաղաքում կատարւած ոտնձգութիւններին, կոչ արեց աշակերտութեանը գիտութեամբ զինել, արթուն, գիտակից եւ պահանջատէր լինելու ու միակամ կեցւածքով շարունակել մեր պայքարը: Ապա Սրբազն Հօր բացականշած «Պայքար, պայքար մինչև յաղթանակ» լոգունքը երեք անգամ կրկնելով հատատեցին ներկաները:

Վերջում յուշարձանի մօտ տեղադրեց Ցեղասպանութեան 99-ամեակը խորհրդանշող գերբը, որից յետոյ տեղի ունեցաւ ծաղկների մատուցում աշակերտների

միջոցով:

Զորեքշաբթի՝ ապրիլի 23

Ապրիլ 23-ի կեսօրուայ ժամը 12:45-ին, հայոց ազգային «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների աշակերտության ներկայացան Ս.Ա. վաճռ, ուր դատապարտող կարգախօսների վանկարկումով իրենց պահանջատիրական ձայնը միջացրին համայն հայութեան ձայնին: Ծրագրում Ս. Կապուտիկեանի «Մտորումներ ճանապարհի կեսին» բանաստեղծութեան ասմունքով հանդէս եկան աշակերտներ՝ Վանայ Շիրանեանը, Անդրիա Խաչատրեանը, Միհր Ղազարեանը եւ Մենուա Յովսէփեանը:



Այսուհետեւ առաջնորդ Սրբազնան Հայրն իր հայրական օրինանքը փոխանցեց աշակերտութեանը՝ կարեւորելով Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաշման փուլից դէպի հատուցման փուլ անցում կատարելը եւ յորդորեց՝ պահանջատէրը լինել մեր արդար իրաւունքների եւ պաքարել մինչեւ յաղթանակ:

Վերջում տեղի ունեցաւ ծաղկեների մատուցման առարջութիւն, որի ընթացքում աշակերտներ՝ Վանայ Շիրանեանն ու Թանիա Միհանեանը կատարեցին «Կիլիկիա» երգը՝ այն նիփելով բիլաւոր նահատակների անմոռաց յիշատակին:

Վերոնշեալ բոլոր արարողութիւններին ներկայ էին ազգային մարմինների ներկայացուցիչները եւ 99-ամեակի ոգեկոչման նոր Զուղայի յանձնախմբի անդամները, իսկ հաղորդավարութեամբ հանդէս եկաւ նոյն յանձնախմբի անդամ Սուէ Պողոսեանը:



Յատկանշելի է, որ չորեքշաբթի՝ ապրիլի 16-ի կեսօրից յետոյ ժամը 2-ին, Ս.Ա. վաճռի շրջափակում մասնակցութեամբ «Քանանեան» դպրոցի միջնակարգ օդակի աշակերտութեան կազմակերպել էր workshop, որտեղ պատրաստեցին դատապարտող պաստառներ եւ կատարեց յուշարձանի ու յարակից տարածքի մաքրման աշխատանքը: 5 ժամ տեսած ծրագրի ընթացքում աշակերտները հայրենասիրական երգերի կատարմամբ ոգեւորեցին բոլորին եւ Հայոց Յեղասպանութեան իրողութեան մասին տեղեկութիւններ փոխանցեցին վաճք այցելող օտարերկրացի զբուաշըրջիկներին:

Այս տարի եւս աւանդոյթի համաձայն վաճռի պատերի վրայ ցուցադրել էին հայոց ազգային դպրոցների աշակերտութեան նկարչութիւններն ու պատի թերթերը՝ «Հայոց Յեղասպանութիւն» խորագրով:

ՊԱՀԱՆՁԱՏԷՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԽՈՒՌՆԵՐԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՅՆ 99-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ ՈԳԵԿՈՉԻԵՑ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Զորեքշաբթի՝ ապրիլի 23

Հայոց Յեղասպանութեան 99-րդ տարելիցի առիտով, ապրիլի 23-ի երեկոյեան, ժամը 7:30-ին, նոր Զուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգէն եպս. Զարեանի եւ մասնակցութեամբ հոգեւորականաց դասի, տեղի ունեցաւ հսկումի արարողութիւն, որին յաջորդեց խորհրդաւոր լոռութեան ներքոյ մոմերով երթը դէպի Ս. Ամենափրկիչ վաճռ: Սոյն երթին մասնակից

պահանջատէր ժողովուրդը գլխաւորութեամբ առաջնորդ Սրբազնան Հօր եւ ուղեկցութեամբ Խալ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանի եւ թեմի ազգային մարմինների ու շրջանի Հայ դատի յանձնախմբի անդամների, քայլելով Արեւմտեան ու Արեւելեան նազար կենտրոնական պողոտաներով, շարժեց դէպի Ս. Ամենափրկիչ վաճռ, ուր Եղեննի զոհերի յիշատակը յաւերժացնող յուշարձանի մօս կալացաւ բոլորի համահաւաք:



Համահայաքն սկիզբ առաւ երեկոյի հաղորդավալը, Հայոց Ցեղասպանութեան 99-ամեակի ոգեկոչման նոր Զուղայի յանձնախմբի անդամ Սուէ Պողոսեանի հետեւեալ խօսքով. «99 տարի առաջ ապրիլի 23-ի լոյս 24-ին, Օսմանեան թուրքերի կազմակերպած Հայոց Ցեղասպանութեան նենդ ծրագրի համաձայն՝ 250 հայ մտաւորականներ ձերբակալեցին Պոյսում եւ Հայդար փաշա կայարանից տարւեցին դէպի Այաշ, Գանդրը եւ միւս սպանդանոցներ ու դաժանօրէն սպանւեցին: Այսօր արեւմտահայ լուսաւոր մտքի ու հանճարի նահատակութեան յիշատակման օրն է»: Այնուհետեւ հաղորդավարը ներկաներին հրավիրեց մէկ րոպէ յոտնկայս լուսութեամբ յարգելու Եղենի բիւրաւոր նահատակների յիշատակը:



Համահայաքի շարունակութեան մէջ բանախօսութեամբ հանդէս եկաւ խորհրդարանի պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը: Նա մի քանի դրագներով փոխանցեց Թուրքիայի կառավարութեան կողմից Հայոց Ցեղասպանութեան իրականութիւնը խեղաթիւրող քաղաքականութեան կիրառումը, նաև կարեւորելով հայութեան կողմից նման համահայաքների կազմակերպումը, աւելացրեց. «Այն երկիրը, որը հիմնւել է ոճրագործութեան վրայ, այն պետականութիւր, որը պատմականօրէն իր արմատները միխճել է ուրիշի հողի մէջ եւ ուրանում է այդ փաստը, այն պետականութիւնը, որը բացի հային ոչնչացնելու փորձեր կատարելուց՝ փորձել է նաեւ նրա նիւթական եւ բարոյական ժառանգութիւնը հողին հաւասարեցնել եւ դրան

գուգահեռ փորձել է ուրանալ կատարւածը, աշխատում է նաեւ ուրանալ իր եւ իր ժողովրդի ինքնութիւնը: Այդու այսպիսի համահաւաքների կազմակերպումը իր պահանջատիրական կողմից բացի՝ բարոյական զգօնութիւն է ներշնչում նաեւ թուրք ժողովրդին: Բարեբախտաբար այդ ժողովրդի մէջ կան բարեխիղն անհատներ եւ նրանց թիւն օրըստօրէ շատանում է, ովքեր քաջութիւն են գտնում իրականութիւնն արտայայտել եւ իրենց պետականութիւնից պահանջել ընդունելու իրենց նախնիների կատարած ոճրի պատասխանատութիւնը»:



Պրն. Բեգլարեանը բանախօսութեան աւարտին կարեւորութեամբ նշեց. «Մեր գործը դեռ աւարտւած չէ: Պէտք է պայմանները ճիշտ գնահատելով անյողդողդ քայլերով եւ միահամուռ կամքով ու հաւատքով յաղթահարենք դժւարութիւնները եւ նւաճումներ արձանագրենք: Թէպէտ երկար ճանապարհ պիտի անցնենք այս ուղղութեամբ, սակայն ինչպէս մեր հայրերը, այնպէս եւ մենք, պէտք է պահենք ու պահպանենք մեր սրբատառ լեզուն, մշակոյթն ու կրօնը, պէտք է յիշելով մեր պատմութիւնն ու մեր նախնիների թողած հարուստ ժառանգութիւնը՝ արւեստի, քաղաքականութեան, մշակոյթի, տնտեսութեան եւ գիտական ասպարէզներում, հասնենք մեր ազգային բարձրագոյն նպատակին»:



Բանախօսական ելոյթին յաջորդեց գեղարեսատական յայտագրով ծրագիրը: Սոյն բաժնում հայ երգի մեծ վարպետ՝ Կոմիտասի ստեղծագործութիւններից հնչեցին չորս երգեր, որոնցից «Կանչէ կոռունկ», «Զինար ես» եւ «Հով արէք» երգերը մենակատարեց Ս.Ս.

Վանքի «Տաթես» երգչախմբի ղեկավար Համիկ Ալեքսանդրեանը, իսկ «Կոռունկ» երգը՝ Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» պատանեկան երգչախմբի անդամ-մեներգիչ Վանայ Շիրանեանը:

Ցայտագրում տեղ էին գտել նաև ասմունքներ՝ Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կոռունկ» համոյշի ասմունքի խմբի անդամներ՝ Ալինա Տէր Սուրբիասեանի եւ Մանիա Ղուկասեանի կատարմամբ, ովքեր ղեկավարութեամբ Ռիմա Սիմոնեանի ասմունքեցին Գեղամ Սարեանի, Պարոյր Սեւակի եւ Գէորգ Էմինի ստեղծագործութիւններից կազմած հաւաքածոյ, իսկ նոյն համոյշի պարախումը ներկայացրեց երկու պարային կատարումներ. առաջինը «Մոմերով պար»-ը, որը կատարւեց խմբի իգական սեղի ներկայացուցիչների միջոցով, իսկ երկրորդը՝ յաղթանակ խորհրդանշող «Սարդարապատ» պար՝ տղաների կատարմամբ:



Համահայաքի եզրափակիչ ելոյթը հանդիսացաւ թեմակալ առաջնորդ Տ. Բարգէն եպս. Զարեանի պատգամը օրիայ առնչութեամբ:

Ստորև մէջբերում ենք Սրբազն Հօր պատգամից մի հատուած.

«Արթուն, իմաստուն եւ քաջարի եղէ՛ք, երազ ու տեսիլք ունեցէ՛ք։ Դժւարութիւններից չընկճէ՛ք, այլ նեղութեանց դէմ պայքարէ՛ք, հայրենիքի հզօրացման գործին նպաստէք, Հայ դատի ու մեր ժողովրդի արդար իրաւունքների պահանջատէրը եղէ՛ք։ Քաջարի հայ գինւորներ, եղէ՛ք միակամ պաշտպանը հայ հողի։ Քայլեցէ՛ք յաղթական, քայլեցէ՛ք անսասան եւ անպայման յետ բերէ՛ք Արարատը։ Այս է ճանապարհը հայութեան յաւերժութեան»։

Սրբազն Հայրն իր պատգամի աւարտին աւելացրեց. «Կամք ու կորով ձեզ վեր յառնած զաւակներ ազգիս հայոց, շարունակէ՛ք պայքարը ի խնդիր մեր արդար իրաւունքների վերատիրացման, պայքար ի խնդիր մեր ազգի արժանապատութեան, պայքար ի խնդիր նոյն եւ մէկ ու ամբողջական հայութեան ու հայրենիքի»։

Երեկոն աւարտւեց ժողովրդի մոմավառութեամբ:

Երեկոյի ամբողջ ընթացքում յուշարձանի շուրջ, անմար ջամփերով հսկումի արարողութիւն տեղի ունեցաւ Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Ակադեմիան միաւորի անդամների միջոցով։ Նոյն միութեան Մշակութային միաւորի նախաձեռնութեամբ Վանքի ցուցաբահում կազմակերպել էր «Յեղասապանութեան լուսութիւն» խորագրով լուսանկարների ցուցահանդէս-մրցոյթ, որտեղ այցելուներին առիթ ընձեռւեց քեարկել իրենց նախընտրած լուսանկարի օգտին, որի արդինքը կամփոփիլ յառաջիկայ օրերի ընթացքում։ Իսկ նախաձեռնութեամբ «Թարէոս Թարէոսեան» պատանեկան միութեան, սոյն միութեան անդամներն ու համանքի մի շարք պատանիներ ապրիլ 23-ի երեկոյից 24-ժամեայ նստացոյցի էին դիմել եւ համահայաքի ամբողջ ընթացքում պահանջատիրական կարգախօսների վանկարկումներով ու յեղափախական երգերով ոգեւորում էին ներկաներին։

Աւանդոյթի համաձայն կազմակերպել էր նաև արեան տչութիւն։

Հինգշաբթի՝ ապրիլի 24

Ապրիլի 24-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Ս. Ամենափրկիչ վանքի շրջափակում գտնուղ Ապրիլեան եղենի նախատակների յուշարձանի առջեւ, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բարգէն եպս. Զարեանի եւ մասնակցութեամբ հոգեւորականաց դասի տեղի ունեցաւ հոգեւորականաց դասի ու արարողութիւն, որի ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրիսանեանի։



Հոգեպարար արարողութեանը յաջորդեց բողոքի համահայաքը, որը մեկնարկեց հաղորդավար Թալիկն Մովսիսեանի հետեւեալ խօսքով. «Անհրաժեշտ է գիտակցենք, որ պահանջատիրութեան յաջողութեան գրաւականը նպատակալաց եւ հետեւողական պայքարն է, որ մեր ժողովրդի արդար դատի լուծումը պէտք է դարձնենք մեր առօրեան, մեր կեանքի մի կարեւոր մասնիկը, մեր մտածումների ու մտահոգութիւնների գերազոյն խնդիրը եւ օրակարգը»։

Ապա ընթերցւեց Սպահանի հայոց Թեմական խորհրդի պատգամը նոյն խորհրդի անդամ Քառովին Դիլանչեանի միջոցով, որտեղ անդրադառնալով 99 տարիներ առաջ Թուրքիայի պետութեան կողմից ծրագրւած ու իրագործւած հայ ժողովրդի դէմ ցեղապանութեան իրողութեանը եւ մինչեւ այսօր նոյն երկրի

Բերթական պետութիւնների կողմից որդեգրած հայատեաց քաղաքականութեանը, ասւած էր. «Թուրքիայի Հակահայ քաղաքականութեան չարունակութեան դրսեւրումներից է նաեւ Քեսարի վերջին իրադարձութիւնները: Դեռևեւս սիրիական ճգնաժամի առաջին խսկ օրերից ակնյայտ էր, որ Սիրիայի պետականութեան քայլայումից բացի, Թուրքիայի համար մեծ նշանակութիւն ունի նաեւ Հարեւեան երկրում Հայկական հզօր համայնքի վերացումը: Թուրքիայի համար չափազանց կարեւոր է Մերձաւոր Արեւելքի երկրները, յատկապէս Սիրիան տեսնել հայաթափւած, քանի որ որպէս ցեղասպանութեան ժառանգորդներ, նրանք համարւում են պահանջատէրեր»:



Սույն խօսքի շարունակութեան մէջ անհրաժեշտ համարելով հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումից դէպի պահանջատիրութիւն անցում կատարելը եւ ողջունելով երկու Վեհափառ Հայրապետների հրապարակած միացեալ կոչը Արեւմտահայաստանի եկեղեցապատկան կալւածները վերադարձնելու կապակցութեամբ, կարեւորութեամբ ընդգծած էր. «Արդէն մօտենում ենք Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարեկիցին: Այս ուղղութեամբ ահռելի աշխատանք է սպասւում. անհրաժեշտ է զօրակոչի ենթարկենք մեր բոլոր ուժերը: Մեր միասնական ողին ու պահանջատէր կեցւածքը այն հզօր գէնքերն են, որոնցով կարող ենք պարտադրել Թուրքիային եւ այդ երկրի տնտեսական շահերից կուրացած աշխարհին հաշւի նստելու հայութեան անժամանցելի եւ անբեկաննելի իրաւունքների հետ»:

Ելոյթների շարանում ամենամեայ նստացոյցը կազմակերպող «Թադէոս Թադէոսեան» պատանեկան միութեան վարչութեան խօսքն ընթերցւեց Վանայ Շիրանեանի միջոցով, որտեղ նշած էր. «Դատապարտելով հայ ժողովրդի դէմ ուղղաւած Թուրքիայի և Աղրբեժանի բոլոր սաղրանքներն ու դաւերը, մենք՝ նստացոյցի դիմած պատանիներս, հաշւի առնելով, որ միջազգային օրէնքի համաձայն ցեղասպանութեան արարքը յայտարարւել է ոճրագործութիւն մարդկութեան դէմ, եւ որ այդ կարգի ոճրագործութիւնները պատժելու համար գոյութիւն ունի անժամանցելիու-

թեան սկզբունք, պահանջում ենք միջազգային իրաւուսու դատարաններում Թուրքիայի պետութեան դատավարութիւնը, հայ ժողովրդին ցեղասպանութեան ենթարկելու արարքի, հայ ազգին հայրենագուրկ դարձնելու, պատմամշակութային ժառանգութիւնները ոչնչացնելու, հայութեան նիւթական հարստութիւնները սեփականացնելու համար: Պահանջում ենք նաեւ, որ Թուրքիան հայ ժողովրդի բռնագրաւեալ հայրենիքը՝ Արևմտեան Հայաստանը վերադարձնի իր իրաւատիրոջը եւ մշակութային, մարդկային ու նիւթական վնասներին հատուցում կատարի»:



Ծրագիրն աւարտւեց ծաղիկների մատուցման արարողութեամբ՝ մասնակցութեամբ թեմակալ առաջնորդի, քահանայ հայրերի, խորհրդարանի պատգամատրի, շրջամի Հայ դատի յանձնախմբի, ազգային մարմինների, միութիւնների, դպրոցների պատասխանատունների եւ պահանջատէր հայորդինների:



Քամի որ այս տարի քայլարշալի արտօնութիւն չէր տրւել, համահաւաքի աւարտին պահանջատէր ժողովուրդն ինքնարուի կերպով Ս. Ամենափրկիչ վանքից քալեց դէպի Նոր Զուլայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւն եւ անցնելով Հաքիմ Նեզամի ու Խաղանի գլխաւոր պողոտաներով, վեր բարձրացրած բունցքներով վանկարկեց դատապարտող եւ հատուցում պահանջող կարգախօսներ: Ցոյցն աւարտւեց «Արարատ» միութեան շրջափակում:

Ցատկանշական է, որ ոգեկոչման Նոր Զուլայի յանձնախմբի դասաւորութեամբ նոյն օրը Հայոց Ցեղասպանութիւնը դատապարտող կարծ հաղորդագրութիւն առաքվեց բջջային հեռախօսներին:

ՇԱՀՆԱԶԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՈՒՅ ԶՈՒՄ ԶՈՒՄԱՅԻՆԻ



Կիրակի՝ 2014 թւականի ապրիլի 13-ի առաւոտեան, Նոր Զուղայի Ս. Ստեփանոս, Ս. Ցովհաննու, Ս. Աստվածածին եւ Ս. Մինաս եկեղեցիներում մատուցեց սուրբ եւ անմահ Պատարագ ու տօնւեց մեր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի Երուսաղէմ յաղթական մուտքի յիշատակը: Պատարագիչ քահանայ հայրերը Ս. Պատարագից առաջ օրինեցին ուղենու եւ ձիթենու ճիւղերը, որոնք պատրաստել եւ զարդարել էին եկեղեցիների Տիկնանց յանձնախմբերի միջոցով: Օրինած ճիւղերը արարողութիւնից յետոյ բաժանեցին Եերկայ հաւատացեալներին:



Ս. Մինաս եկեղեցում մատուցուղ Ս. Պատարագին նախագահեց յաւուր պատշաճի քարոզեց թեմակալ առաջնորդ՝ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը: Առաջնորդ Սրբազն Հայրն իր քարոզի մէջ բացատրելով աւետարանական այն հատածը, որտեղ Եերկայացում է Յիսուս Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ եւ ժողովրդի ու յատկապէս մանուկների դիմաւորումն ու օրիներգութիւնները, շեշտեց, որ Քրիստոսը խաղաղութիւն հաստատեց աշխարհի վրայ, որը նման չէ աշխարհի տւած խաղաղութեանը, այլ մնայուն է ու յափտե-

նական եւ լցնում է մարդկանց ամբողջ հոգիներն ու մտքերը, ինչը, որ փնտրուում եւ խնդրուում է մարդկութեան կողմից: Գերշ. Սրբազն Հայրը Ծաղկազարդը նաև մանուկների տօն համարելով՝ յորդորեց հաւատացեալներին՝ մանուկների նման մաքուր եւ անմեղ սիրու ու հոգի ունենալ, ինչը անհրաժեշտ է ապաշխարութեան շրջանը՝ Մեծ պահոց օրերը բարութեամբ աւարտելու եւ Քրիստոսի Ս. Յարութեան տօնը սրբութեամբ դիմաւորելու համար:



Ս. Պատարագի աւարտին, եկեղեցու շրջափակում, շարականի երգեցողութեամբ, տեղի ունեցաւ մանուկների թափօրի արարողութիւն, որին մասնակցեց Եերկայ ժողովուրդը եւ կենտրոնանալով եկեղեցու բակում Առաջնորդ Սրբազն Հօր միջոցով մանուկների օրինութիւն տեղի ունեցաւ:

Նշենք, որ յատուկ կարգադրութեամբ, Ս. Ցովհաննու Կարապետ եկեղեցում մատուցուղ Ս. Պատարագին Եերկայ գտնեցին Նոր Զուղայի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի եւ «Արմէն» տարրական Երկսեռ կրթահամալիրի առաջին եւ չորրորդ դասարանների աշակերտներն ու պատասխանատուները, ովքեր մասնակցեցին նաև թափօրի արարողութեանը:

ԱԻԱԳ ՇԱԲԱԹԻԱՅ ԵՒ Ս. ԶԱՏԿԻԱՅ ՏՕՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Աւագ շաբաթայ արարողութիւնների շարքն սկսեց երեքշաբթի՝ ապրիլի 15-ին, Տասը կոյսների առակի յիշատակի օրը, որն աւանդաբար կոչում է «Յիշարիմաստուն»: Այս առթիւ արարողութիւններ տեղի ունեցան Ս. Ստեփանոս, Ս. Միհնաս, Ս. Աստվածածին եւ Ս. Յովհաննու եկեղեցիներում, որին մասնակցել էին հայոց դպրոցների աշակերտութիւններից, ներկայացնելով առակի տասը կոյսերը: Առաջնորդ Միրազան Հայրը նախագահեց Ս. Ստեփանոս եկեղեցում կատարուած արարողութեանը եւ ներկաներին ու յատկապէս աշակերտութիւններին փոխանցած իր պատգամում թելադրեց միշտ արթուն եւ պատրաստ լինել Տիրոջ ուրախութեանը մասնակից լինելու եւ նրան դիմաւրելու:



Աւագ հինգշաբթի առաւոտեան սուրբ եւ անման Պատարագ մատուցեց Ս. Ստեփանոս եւ Ս. Միհնաս եկեղեցիներում: Հերթաբար երկու եկեղեցիներում եւս ներկայ գտնեց եւ նախագահեց գերշ. Տ. Բարգեն եպս. Չարեանը՝ ընթերցելով Ս. Բարսեղ Հայրապետի աղօթքը՝ Ս. Հաղորդութեան մասին: Ս. Ստեփանոս եկեղեցում ներկայ էր տարրական օղակի, իսկ Ս. Միհնաս եկեղեցում՝ ուղեցոյց եւ միշնակարգ օղակների աշակերտութիւնը: Թեմակալ առաջնորդը Ս. Բարսեղ Հայրապետի աղօթքին անդրադառնալով բացատրեց Ս. Հաղորդութեանը ճիշտ վերաբերելու անհրաժեշտութիւնը եւ շեշտեց, որ այն չպէտք է դիտի իբրեւ սոսկ հաց եւ գինի, այլ՝ Քրիստոսի կողմից իսկ հաստատած՝ Քրիստոսի մարմինն ու արիւնը, որը կարողութիւն ունի սրբացնելու արժանաւոր ճաշակողներին եւ դատապարտելու անարժաններին, որի միջոցով հաւատացեալները հաղորդակցում եւ միացած են մնում մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիշուն Քրիստոսի հետ, ինչպէս Պողոս Ս. Պատարագի բառերն են ասում. «Մօտեցէք Տիրոջը եւ տեսէք թէ որքա՞ն քաղցր եւ յափունական է նրա ուրախութիւնը»:

Աւագ հինգշաբթի երեկոյեան, Պտնլայի խորհրդաւոր արարողութեան ընթացքում, «Տարեցների տարւայ» առթիւ, հոգեւոր հայրերը լացին տարեցների ու-

քերը: Թեմակալ առաջնորդը ներկայ գտնւեց Ս. Յովհաննու եկեղեցում եւ օրուան պատշաճ իր պատգամի մէջ յիշեց, որ Վեհափառ Հայրապետի կողմից 2014 թականը «Տարեցների տարի» է հոչակւել, որի պատճառով այս տարի Պտնլայի արարողութեանը տարեցների ուղերն են լացում նրանց յարգելու եւ մեծարելու նպատակով: Առաջնորդ Միրազան Հայրը շեշտեց, որ Պտնլայի կարգը խորհրդանշից է խոնարհութեան, ծառայութեան, նիֆրումի եւ զոհողութեան, նաեւ յիշեցրեց, որ Յիշուն Քրիստոսն իր աշակերտների ուղերը լանջով հաստատեց մկրտութեան աւազանը՝ մեղքերից սրբւելու եւ մաքրւելու համար:



Եկեղեցիներում Պտնլայի արարողութեանը յաջորդեց Խաւարման հսկումի կարգը Ս. Ստեփանոս, Ս. Միհնաս, Ս. Աստվածածին եւ Ս. Յովհաննու եկեղեցիներում: Խաւարման երկարաժամ կարգն ամբողջութեամբ լեցուն է քաղցր եւ խորհրդաւոր շարականներով, երգերով եւ աւետարանական ընթերցումներով: Թեմակալ առաջնորդը նախագահեց Ս. Ստեփանոս եկեղեցում կատարուած արարողութեանը եւ «Ո՞վ ես մայր իմ» յուզիշ երգից յետոյ, մթութեան եւ լուսիթեան մէջ իր պատգամը փոխանցեց հաւատացեալներին՝ բնաբան ունենալով Յիշուն Քրիստոսի հետ խաչող աւազակի զղջման այն խօսքը, թէ՝ «Ո՞վ Տէր, յիշի՞ն ինձ երբ գաս Քո արքայութեամբ» եւ ասաց, որ իւրաքանչիւր հաւատացեալ պարտաւոր է ընդունել Յիշուն Քրիստոսին որպէս աշխարհի Փրկչի ու աշխարհի ստեղծողի, եւ իր խօսքի մէջ անդրադարձաւ Քրիստոսի տնօրինական կեանքին, նրա կատարած բժշկութիւններին, հրաշքներին եւ ուսուցումներին, շեշտելով, որ նա իր անձը զոհեց եւ իր արիւնը թափեց ամբողջ մարդկութեան մեղքերից սրբւելու եւ մաքրւելու համար:

Աւագ ուրբաթ երեկոյեան, Սպահանի հայոց թեմի բոլոր հոգեւորական հայրերը Առաջնորդ Միրազան Հօր գլխաւորութեամբ ներկայ էին Ս. Ստեփանոս եկեղեցում, որտեղ խորհրդանշականորէն Քրիստոսի թաղման կարգը կատարւեց: Դասի կենտրոնում, Ս.

Խորանի առջեւ ծաղկմերով զարդարած եւ Քրիստոսի գերեզմանը պատկերող սեղանի առջեւ հոգեւոր հայրերը ծնկի իշած երգեցին «Սուրբ Աստված»-ը:



Արարողութեան աւարտին գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը, բնաբան ունենալով Պօղոս առաքեալի այն խօսքը, որ ասում է. «Արդէն ազատ ենք Քրիստոսի արեամբ սրբարան մտնելու», իր պատգամը փոխանցեց հաւատացեալ ներկաներին՝ ասելով, որ Քրիստոսն իր արեան գնով մի նոր եւ կենդանարար ճանապարհ բացեց՝ վերստին Աստծուն մօտենալու եւ յախտենական կեանքը ժառանգելու համար: Գերշ. Սրբազն Հայրն իր խօսքի մէջ բացատրեց Քրիստոսի գրիողութեան մասին եւ անդրադառնալով Քրիստոսի գերեզմանի իմաստին՝ ասաց, որ այն խորիրդանշը է մեղքերի քառութեան, նոր եւ առաւել կեանքի, որ Ցիսուս Քրիստոսը բաշխեց ամբողջ մարդկութեանը: Մեմակալ առաջնորդը նաեւ խօսելով Քրիստոսի բերած խաղաղութեան մասին, շեշտեց, որ այսօր աշխարհը որքա՞ն պէտք ունի այդ խաղաղութեանը եւ մանաւանդ անդրադաւ սիրիահայութեան եւ քեսաբահայութեան դիմագրաւած դժւարութինների ու տառապանքների մասին եւ աղօթեց, որ շուտով խաղաղութինը վերահստատի Սիրիոյ մէջ եւ մեր ժողովուրդը կրկին ունենայ իր բնական կեանքը:

Ծարաթ՝ ապրիլի 19-ի երեկոյեան ժամը 6-ից, Ս. Զատկի Ծրագալուցին Ս. Պատարագ մատուցեց Նոր Զուլայի Ս. Ներսէս եկեղեցում՝ նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի: Յընթաց Ս. պատարագի, առաջնորդ Սրբազն Հօր միջոցով ընթերցեց Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա Վեհական Հայրապետի պատգամը Ս. Զատկական տօնի աղթի: Նոյն աղթով ծխատէր քահանայ հայրերի միջոցով Ս. Պատարագ մատուցեց Ս. Ստեփանոս, Ս. Նիկողայոս եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներում, Ս. Հաղորդութիւն ստացան ներկայ հաւատացեալները, որով վերջ գտաւ Մեծ Պահոց ժամանակաշրջանը եւ Ցիսուս Քրիստոսի հրաշափառ յարութեան աւետիսն ստանալով՝ արարողութիւնից ստացած օրինութիւնն իրենց հետ տուն տարան՝ իրենց յարկերը լուսաւորելու աստվածային լոյսով:

Յաջորդ օրը, կիրակի՝ ապրիլի 20-ի առաւոտեան, Փրկչի յաղթական յարութեան տօնի՝ Ս. Զատկի աղթի, հանդիսաւոր Պատարագ մատուցեց Նոր Զուլա-

յի Ս. Մինաս, Ս. Յովհաննու, Ս. Ստեփանոս եւ Ս. Աստվածածին եկեղեցիներում, որտեղ արարողութեան ընթացքում պատարագիչ քահանայ հայրերն ընթերցեցին թեմակալ առաջնորդ Սրբազն Հօր պատգամը՝ Նոյն տօնի առնչութեամբ, որտեղ ասւած էր. «Քառասնօրեայ Մեծ պահոց շրջանը համբերութեամբ եւ զգաստութեամբ աւարտեցինք: Մեծ պահոց շրջանին ըոլորս անդրադառնք աստւածային, դրախտային կեանքի պարզեւած ուրախութեանը, բայց միաժամանակ ականջալուր եղանք Աւետարանի ճամբով, թէ՝ ինչպէս մարդը չչնազանդւելով աստւածային կամքին եւ օրէնքին, չպահելով Աստծու պատւիրանը՝ կորցրեց դրախտային կեանքի ուրախութիւնն ու երջանկութիւնը, միաժամանակ անդրադառնք, որ մարդը կարելիութիւնն ունի վերատիրանալու իր երջանկութեանը: Անառակ որդու նման մարդը հեռացաւ Աստծու տնից եւ օրէնքից, ընկաւ մեղքի տիղմի մէջ եւ մի պահ կորցրեց իր ուրախութիւնը, ազատութիւնն ու անդրութիւնը: Մարդը մի պահ կորցրեց Աստծու տւած առաջին պատմուծանը հագնելու ուրախութիւնը եւ նրա մէջ խաթարւեց Աստծու խսկական պատկերը: Քառասնօրեայ պահեցողութեան այս շրջանը, լաւագոյն առիթն էր՝ մտածելու, անդրադառնալու, անձը քննելու, անառակ որդու նման վերադարձի ճամբան փնտուելու եւ գտնելու, սխալը սրբագրելու, մեղքը խոստովանելու եւ կեանքի ընթացքը փոխելու: Աստւած անառակ որդու հօր նման, որպէս մեր բոլորի Հայրը, ամենողորմ Տէրը, սպասում է մեղ, սպասում է մեր վերադարձին, մեր զղումին եւ խոստովանութեանը: Ճիշտ այս պատճառով Պօղոս առաքեալը թելաղորում է մեղ նախ՝ հոգեւորապէս մկրտւել»: Առաջնորդ Սրբազն Հայրն իր պատգամի վերջաւորութեանը յորդորեց հաւատացեալներին քայլել Քրիստոսի ցոյց տած ճանապարհով, թօթափելով ինչ մեղանչական մարդը եւ ապրել մի նոր կեանք:



Նշենք, որ Գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի ձեռամբ եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցեց Շահինշահրի եկեղեցում:

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԳԵՂԻ ԼՈՒՍԱՎԱՆԳԻՒՏ

Ուրբաթ՝ 2014 թւականի ապրիլի 25-ին, տեղի ունեցաւ ուխտագնացութիւն դէպի Լուսահանգիստ: Կրօնական Խորհրդի եւ Ն. Զ. Հայոց Եկեղեցեաց Վարչութեան միջոցով այս տարի բարեգարդւել է Լուսահանգստի վայրը. մատուի երկու կողմերում մոմավառութեան համար սենեակներ են կառուցւել եւ մատուան ներսում գտնւող նահատակ Գրիգորի շիրմաքարը վերանորոգւել է:



Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդը ներկայ գտնւելով Լուսահանգստի վայրում, բազմահարիւր ուխտաւորների ներկայութեամբ Հոգեհանգստեան արարողութիւն կատարեց, որից յետոյ իր պատգամն ուղեց հաւատացեալ ժողովրդին, որտեղ անդրադարձնալով Ս. Յարութեան տօնին, յարութեան գաղափարի վերաբերեալ խորհրդածութիւն կատարեց՝ ասելով. «Քրիստոսը մահւան վրայ յաղթանակ տանելով՝ ընկճեց այն եւ իր յարութեամբ լուսաւորութիւն եւ յաւիտենական կեանքի նոր յոյս սփուեց մարդկութեան վրայ: Այդ կեանքը՝ վերանորոգ,

առաւել աստւածահաճոյ եւ քրիստոնէավայել կեանքն էր»: Առաջնորդ Սրբազն Հայրն իր խօսքի մէջ նաեւ անդրադարձաւ Քրիստոսի բերած հաւատի մասին, որը իւրացւեց հայ ժողովրդի կողմից՝ Հայաստան աշխարհը դարձնելով երկրորդ Բեթղեհէմ, որտեղ իշաւ Միածին Որդին եւ Հայաստանեաց առաքելական սուրբ Եկեղեցու յատակագիծը գծեց, երբ 301 թւականին, Ս. Գրիգոր Լուսաւորչ շանքերով Հայաստանում պետականորէն ընդունեց քրիստոնէութիւնը: Այդ նոր հաւատով ապրեց, շնչեց, ստեղծագործեց ու պայքարեց հայ ժողովուրդը: Գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանն անդրադառնալով Հայոց ցեղասպանութեանը, նշեց. «Արիւնարրու թշնամին ուզեց մեր ժողովրդին մեռած եւ գերեզմաննեած տեսնել, սակայն ձախողւեց իր մտադրութիւններում, քանի որ հայ ժողովուրդը Քրիստոսի օրինակով վեր յառնել իմացող ազգ է եղել՝ վերստին կեանքին նայելով՝ անմահութեան ճամբորդ դառնալով»:



Թեմակալ առաջնորդը շարունակելով իր պատգամը, խօսեց նահատակ Գրիգորի կեանքի մասին, ով Քրիստոսի օրինակով իր արիւնը թափեց՝ քրիստոնէութիւնն անսասան պահելով իր մէջ, աւելացնելով, որ նա պէտք է վառ օրինակ ծառայի բոլոր հաւատացեալների համար:

Առաջնորդ Սրբազն Հայրն իր խօսքի աւարտին գնահատեց Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի եւ Եկեղեցեաց վարչութեան անդամներին ու Կրօնական խորհրդի գործավարին, ովքեր մօտկից հսկեցին եւ վերահասու եղան Լուսահանգստի վայրի բարեգարդման բոլոր աշխատանքներին: Գնահատեց նաեւ Շահէն Ցովսէփեանին՝ վերանորոգման համար կատարած նիրատութեան կապակցութեամբ եւ կոչ ուղեց ուխտաւոր հաւատացեալներին, որպէսզի նրանք եւս իրենց սրտաբուխ նիրատութեամբ աշակցեն այդ ուխտավայրը մաքուր, յարմարաւէտ եւ բարեզզարդ պահելու գործին:

Կրօնական արարողութիւնից յետոյ, ուխտաւորները մոմ վառեցին եւ խունկ ծխեցին նահատակ Գրիգորի գերեզմանի վրայ եւ պայծառ ու հաճելի օրւայ մնացած բաժինը անցկացրին բնութեան գրկում:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՏՕՆՎԿԱՏԱՐՈՒԹՅԱԻՒՆ՝ «ԲԱՆԿԱՆԵԿԱՆ» ԴՊՐՈՑԻ ՅԱՐԿԻ ՏԱԿ

Մի քանի տարի է, որ Նոր Զուղայի հայոց ազգային «Քանանեան» առջևանց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցում Բուն բարեկենդանի առթիւ կազմակերպող միջոցառմամբ յատով եւ ու զեռ է ստեղծում աշակերտների, ծնողների եւ դպրոցի պատասխանատուների միջեւ: Մինչ համայնքը պատրաստում է երեկոյեան դիմաւորել տարազաւորներին, «Քանանեան» դպրոցն արդէն ընդառաջ է գնացել տօնին՝ միաժամանակ չերմ մթնոլորտ եւ առողջ մրցակցութիւն ստեղծելով աշակերտութեան համար:



Կիրակի՝ մարտի 2-ի երեկոյեան ժամը 4:30-ին, Նոր Զուղայի հայոց ազգային կրթահամալիրի սրահում, նախաձեռնութեամբ «Քանանեան» դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի տեղի ունեցաւ աւանդոյթ դարձած միջոցառումը, Բուն բարեկենդանի առթիւ: Աշակերտութիւնը գգեստաւորւած էին ճաշակով եւ գեղեցիկ, որն ապացոյցն էր երկար համադրման եւ կազմակերպածութեան: Խրաքանչիւն իր տարազով ներկայացնում էր իւրայատուկ կերպար եւ միտք:



Դպրոցի պատասխանատուններից, Ծնողական խորհրդի անդամներից եւ աշակերտներից բացի՝ մշոցառմանը ներկայ էր նաև «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի Ծնողական խորհուրդը:

Զարգալի երաժշտութեան ներքոյ բոլոր աշակերտները պարում էին եւ ուրախանում, իսկ ծրագրի մրցութային բաժնում իրաքանչիւրը պէտք է իրաւարար կազմի մօտ ցուցադրէր իր տարազը եւ ստանար համապատասխան նիշ: Իրաւարար կազմի դժւարին բայց միաժամանակ հաճելի պարտականութիւնը ստանձնել էին՝ Աղիկ Ղեւեանը, Լեռնիկ Ծատուրեանը, Վերգինէ Միղզախանեանը, Անասիկ Խաչիկեանը եւ Նիմէլ Աբրահամեանը: Նիշերը տրում էին համաձայն տարազի գեղեցկութեան, պատրաստման գործընթացի բարդութեան, իմաստի եւ տարազը կրողի համարձակութեան ու ներկայացման ձեւի:

Միջոցառումը վարեց հաղորդավար Հալագէ Խաղողվեանը, ով ներկայացել էր հնորկացու (կարմրամորթ) տարազով:

Ծրագիրը լի էր նորարութիւններով եւ անակնկալներով, իսկ զգեստերի, բեմայարդարման ու օրիայ զբաղմունքների մէջ նկատում էր ճաշակ եւ անխոնջ աշխատանք:

Տարագների ցուցադրումից յետոյ, մինչեւ իրաւարար կազմն ամփոփեց նիշերը, ներկաները հիւրասիրւեցին Ծնողական խորհրդի պատրաստած համել պատառիկներով:

Օրիայ շահողներն էին՝ Անիշա Խաչեանը, Լուսին Մինասեանը, Թաշիա Մինասեանը, Մեղրի Ներսիսեանը, Արինէ Խաղողվեանը, Նելիհանա Գրիգորեանը, Լուսիա Մատթէոսեանը, Արիա Մարգարեանը, Լիլիան Միղզախանեանը, Նարին Մասիհը, Անիա Մարգարեանը եւ Անդրիա Խաչատրեանը, որոնց յուշանւէրներ յանձնեցին իրաւարար կազմի եւ դպրոցի Ծնողական խորհրդի անդամ Լորետա Մինասեանի միջոցով, ով պատրաստել էր օրիան պատշաճ յուշանւէրները:

Վերջում ներկաներին բաժանեց Ծնողական խորհրդի կողմից պատրաստած աւանդական աղանձը:

ԱՇՎԵՐՏԱԿԱՆ ՄՐՅՈՅԹ՝ ՆՈՐ ԶՈՒՀԱՅԻ «ԲԱՆԱՆԵԱՆ» ԴՊՐՈՅԻ ՅԱՐԿԻ ՏԱԿ

Նախաձեռնութեամբ Նոր Զուղայի հայոց ազգային «Քանանեան» աղջ. ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի տեսչութեան եւ ուսուցչական կազմի, 14 մարտի երեկոյեան, կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում տեղի ունեցաւ, մրցոյթ մասնակցութեամբ միջնակարգ օղակի առաջին եւ երկրորդ դասարանների աշակերտութիւնների: Որպէս հանդիսատես սրահում ներկայ էին՝ դպրոցի հայ ուսուցչներն ու 7-րդ դասարանի աշակերտութիւնները եւ մասնակիցների ծնողները:



Ծրագրի սկիզբը հանդիսացաւ «Քանանեան» դպրոցի փոխ-տէսուչ Ռիմա Սիմոնեանի ողջոյնի խօսքը, ով բացատրելով, որ նման մրցոյթ առաջին անգամ է տեղի ունենում, այն իրորինակ համարեց՝ նախորդ տարեշշանի օլիմպիադային մասնակցող աշակերտութիւնների խմբակութեամբ կազմաւորած մրցակից 6 խմբերի պատճառով: Տէս. Սիմոնեանն իր խօսքի շարունակութեան մէջ բացատրեց նաև մրցոյթի ընթացքի մասին:

Որպէս իրաւարար կազմի անդամներ աշակերտների պատասխանները գնահատեցին Ռիմա Սիմոնեանը եւ ուսուցուիր Սեդա Դիլանչեանը, իսկ մրցոյթի համակարգչային ձեւատրումները կատարել էին դպրոցի

շրջանաւարտ Վերգինէ Միրզախանեանի միջոցով:

Մրցակից խմբերը, որոնք հանդէս էին եկել Արցախ, Ուրֆա, Նեմեսիս, Տիգրան Մեծ, Շուշի եւ Անի անանումներով, միմեանց հետ մրցեցին հայագիտութեան, գրականութեան եւ Հայոց պատմութեան բաժիններում պատասխաննելով իւրաքանչիւր բաժնին պատկանող հարցերին:



Ամբողջովին համելի ընթացք ունեցող մրցոյթի արդինքի ամփոփումից յետոյ, յաղթող ճանաչւեց Տիգրան Մեծ Խոմքը, որին անդամակցում էին՝ Շաղիկ Մաթէոսեանը (խմբապետ), Թիմա Յովսէինեանը, Զարինէ Ղարիբեանը եւ Լիլիան Ասատրեանը:

Վերջում ներկաների խարխուսանքին ու բուռն ծափողոյններին արժանացան բոլոր մասնակիցները՝ իրենց պատրաստածութեան եւ կատարած նախապատրաստական աշխատանքների շնորհիւ, որից յետոյ, աշակերտներին առիթ տրեց իրենց տեսակեններն ու սրտաբուխ խօսքերն արտայալտելու մրցոյթի առնչութեամբ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ-ԱՒԱՆԴԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ՆՇԻԵՑԻՆ Ն.Զ. ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՅԱՐԿԻ ՏԱԿ

Նոր Զուղայի հայոց ազգային մանկապարատէզ-նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ ու կազմակերպութեամբ փետրար եւ մարտ ամիսներին պատշաճորէն նշում են եկեղեցական ու ազգային-աւանդական տօները՝ նպատակ ունենալով փորդիկ սաներին

առաւել ծանօթացնել ազգային եւ հոգեւոր արժէքներին ու տօներին, միեւնոյն ժամանակ հաճելի եւ անակնեկալներով լի մթնոլորտ ստեղծել նրանց համար:

Ստորեւ նշում ենք կազմակերպած միջոցառումները.

Տեառնընդառաջի նախատօնակ

Զորեցաբթի՝ փետրվարի 12-ի առաւօտեան, արժն. Տ. Մեսրոպ աւ. քին. Գալստանեանը եւ բրշն. Զահի սրկ. Ղազարեանը Շերկայացան մանկապարտէզ-նախակրթարան, որտեղ բակում բոլորած սաների ու ուսուցիչների Շերկայութեամբ տօնւեց Տեառնընդառաջի նախատօնակը՝ տօնին առնչող խորհրդի բացատրութեամբ եւ շարականների կատարմամբ: Այնուհետեւ Շերկաների միջոցով հնչեց Տերունական աղօթքը եւ քիչ անց բոցավառւեց գունաւոր թղթերով զարդարւած աւանդական բուփը, իսկ դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները երեք անգամ շրջելով խարոյիկ շուրջ, կատարեցին մանկական եւ հայրենասիրական գեղեցիկ երգեր:



Միջոցառման աւարտին բոլորը հիմքափառութեամբ համեղ հրուշակներով եւ մանուկները ուսուցչութիների օգնութեամբ թռան խարոյիկ վրայից:

Վարդանանք

Սուրբ Վարդան գօրավարին, սաներին առաւել ճանաչեցնելու նպատակով՝ չորեքշաբթի՝ փետրվարի 26-ի առաւօտեան, դպրոցի յարկի ներքոյ կազմակերպել էր գեղեցիկ միջոցառում, որտեղ Ծնողական խորհրդի անդամ Սոնիա Դիլանչեանը մանուկներին դիմումը նելի ձեւով նկարագրեց Վարդանանց պատերազմը:



Պատմութեամն ուշադրութեամբ եւ հիացմունքով հետեւող աշակերտներին անակնակալի բերեց զինագգեստներ կրող Վարդան գօրավարը, ով փոքրիկներին յորդորեց, որ լինեն ազգասէր եւ հայրենասէր ու լսեն մեծերի խրատները:

Վարդան Մամիկոնեանի ձեռամբ աշակերտներին նվիրեցին Վարդանանց պատերազմին առնչող նիւթերով ու խաղերով գրքովները:

Ծրագիրն աւարտւեց երեխաների կատարմամբ հայրենասիրական երգերով ու արտասանութիւններով:

Բուն բարեկենդան

Բուն բարեկենդան տօնն ուրախ մթնոլորտի ներքյ նշեց մանակապարտէզ-նախակրթարանում կիրակի՝ մարտի 2-ի առաւօտեան, որին ընդառաջ գնալու համար՝ շաբաթներ առաջ ծրագրել էր մի գողտրիկ միջոցառում: Ակզբում երեխաները կրելով պաղպաղակ խորհրդանշող գլխարկները՝ ընդունեցին այդ համետ ուտելիքի կերպարը եւ մեծ խանդավառութեամբ մէկը միւսին յաջորդելով լուսանկարեցին: Այնուհետեւ տօնը շարունակւեց առաւել գլարճալի մթնոլորտում, ներկայութեամբ երկու շարաճն ծաղրածուների, ովքեր ջանք շնուայեցին մանուկներին ուրախացնելու համար, ինը կարելի էր նկատել երեխաների շուրթերից չհեռացող ժափտից ու նրանց աշքերում առաջացած հրճանքի փայլից:



Վերջում ծաղրածուների միջոցով աշակերտներին բաժանեցին դարձեալ պաղպաղակի տեսքով գեղեցիկ ձեւաւորմամբ աւանդական աղանձի կապոցները:



**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 99-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՌԹԻՒ
ԲԱՆԱԽՈՍԱԿԱՆ-ԳԵՂԱՐԻՒՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ «ԿԱՏԱՐԻՆԵԱՆ» ԴՊՐՈՑՈՒՄ**



Հայոց Ցեղասպանութեան 99-ամեակի ոգեկոչման ծրագրերի շարանում նախաձեռնութեամբ Նոր Զուղայի հայոց ազգային «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի տեսչութեան, ուսուցական կազմի, ծնողական խորհրդի եւ աշակերտութեան, երեքշաբթի՝ ապրիլի 22-ի երեկոյեան ժամը 7-ին, Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում տեղի ունեցաւ բանախօսական-գեղարիւտական երեկոյ, որին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա վլրդ. Գումանեանը, հիւրաբար Նոր Զուղայում գտնուող Անթիլիասի դպրեվանքի փոխտեսուչ հոգջ. Տ. Թորգոն վլրդ. Տօնոյեանը, արժն. Տ. Մեսրոպ ալ. քինչ. Գալստանեանը, ազգային մարմինների, Հայոց ցեղասպանութեան 99-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչները, ծնողներ ու աշակերտներ:

Երեկոն սկիզբ առա ուսուցուի Սոսէ Պողոսեանի ողջոյնի խօսքով, ով ստանձնել էր միջոցառման հաղորդավարութիւնը: Այնուհետեւ յանուն դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի արտայայտեց փոխտեսուչ Ռուբէն Գրիգորեանը: Նա նոյնպէս ողջունելով ներկաներին կարեւորութեամբ նշեց, թէ հայ աշակերտը պէտք է լաւագոյն գիտակցի իր սեփական ժողովրդի ողբերգութիւնը, պէտք է տեղեակ լինի թշնամիների կողմից ստեղծած սպառնալիքներին ու դրանց դէմ պայքարելու միջոցներին: Դպրոցի փոխտեսուչն իր խօսքի աւարտին յատուկ շնորհակալական խօսք ուղղեց 99-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբին՝ ձեռնարկի կազմակերպման գործում ցուցաբերած աշակեցութեան համար:

Այնուհետեւ բանախօսութեամբ ելոյթ ունեցաւ հոգջ.

Տ. Անանիա վլրդ. Գումանեանը: Հայր Սուլբան անդրադառնալով Թուղթիայի կողմից Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնն ուրացող եւ խեղաթիւրող քաղաքականութեանը՝ ասաց. «Պէտք է դադար տալ պատմութեան ծաղրանկարային մեկնարանութեան, գաւեշտին: Արեւմտահայաստանը քերծւած է, մնացել են աւերակ յուշարձաններ, խաչքարեր՝ հողի կամ բուսնած խոտի եւ տատասկի տակ, մնացել են նաև կրօնափոխ եղած հայի բեկորներ՝ ստոյգ մահից փրկւելու համար: Այս վերջինները տեսանելի եւ ապրող խական վկաններ են, ուղեղ չարչարելով փաստերի փնտուառքից առաջ եւ վերջ»:



Բանախօսութեան մի այլ բաժնում հոգջ. Հայր Սուլբան կարեւորութեամբ նշեց. «Կարո՞ղ ենք արդեօք հայոց հայրենահանման եւ ցեղասպանութեան 100-ամեակը դարձնել համամարդկային կարգախօս՝ պաշտպանելու համար ոչ միայն հային, հայութիւնը, այլև մարդկութիւնը եւ կեանքը: Շատ ենք սիրում եւ

յաճախ գործ ենք ածում ճառ զարդարող «մարտահրատէր» բառը։ Հայկական պատիկ համարւող հարցը կարո՞ղ ենք միջազգայնացնել եւ դարձնել համամարդկային տեսիլքի մեկնակէտ։ Սա լինելու է իսկական մարտահրաւէր՝ մարդկութեան եւ մեզ համար։ Այս անելու համար հարկ է դուրս գալ թաղամասային-գաւառական ինքնագոռութեան խցիկից եւ ասել, որ անպատիժ մնացած ոճիր կամ ցեղասպանութիւն հրաւէր է նոր ոճիրների համար։



Զենարկի երկրորդ բաժնում տեղ էր գտել գեղար-
ևստական յայտագրով յագեցած մի ծրագիր, որն
իրականացնեց դպրոցի աշակերտների, համայնքի մի
խումբ երիտասարդ-ուկիների եւ «Ասուա» նագախմբի
համագործակցութեամբ: Սոյն բաժնում ասմունքով
հանդէս եկան աշակերտներ՝ Գէորգ Մովսիսեանը,
Միրօ Ղազարեանն ու Մենուա Յովսէփեանը, իսկ հայ-
րենասիրական երգերի կատարմամբ՝ Կարէն Խանճա-
րեանը, Վեհանու Խուլաբախչեանը, Փարեի Թահ-

մազեանը եւ Աճասիկ Ցովսէփեանը: Կենդանի երաժշտութեամբ երգիչներին ընկերակցում էին դուդուկահար՝ Կարէն Խանլարեանը եւ «Ասուպ» նախախմբի անդամներ՝ Վահէ Կարապետեանը, Կարէն Դիլանչեանը, Ադրիան Դալբեանը, Դրօ Տէր-Մարտիրոսեանը եւ Սերո Տէր-Մարտիրոսեանը: Սոյն բաժնի ընթացքում հնչեց նաև վերոնշեալ նախախմբի հեղինակային երաժշտութիւններից մէկը:



Ծրագրի աւարտին առաջնորդ Սրբազն Հայրն իր հայրական պատգամը փոխանցեց Եերկաներին: Նա բարձր գնահատելով ամբողջութեամբ Երիտասարդների միջոցով իրականացած ծեռնարկը, յայտնեց. «Այսօր պէտք ունենք նման գիտակից եւ յանձնառու երիտասարդների, որպէսզի կարողանան միջազգային բեմերի վրայ մեր ժողովրդի իրաւունքները պաշտպանել եւ հայեացքը դարձրած դէպի Արեւմտեան Հայատան՝ պայքարեն, մինչեւ վերստին Արարատը դարձնեն մեր ժողովրդի սեփականութիւնը»:

**Ն.Զ. ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ «ԱՐՄԵ» ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹԱՎԱՍՏԱԼԻՐԻ ԲԱՑԱՌԻԿ
ՅԱԶՈՂՈՒԹՅԻՆՆ՝ «ՌՈԲՈՏԻԿ»-ի ՄԻՋԴՊՐՈՊԱԿԱՆ ՄՐՑՈՅԹՈՒՄ**



Մրցոյթի առաջին օրում խմբերի պատրաստած քառոտանի ողբուժների միջեւ երկրորդ օրը կայացաւ արագավացութեան մրցոյթ՝ 160 սանտիմետրանոց տարածութեան վրայ: Արդիւնքում, «ԱրմԷն» դպրոցի հինգերորդ դասարանի աշակերտներ՝ Վահագն Թահմազեանի, Թադէ Թահմազեանի եւ Մհեր Մինասեանի խմբի ողբուժ գրաւեց առաջին պատրաստ տեղը՝ յաջողելով ամենակարճ ժամանակահատածում անցնել տարածութիւնը, միևնույն ժամանակահատածում անցնելով շոշափելի ժամանակի տարբերութեամբ, ինչի համար մրցոյթի կազմակերպիչները, իրաւարաններն ու հանդիսատեսն արտայալուեցին իրենց հիացմունքն ու գնահատական խօսքերը:

Այս փայլուն յաջողութեան համար նշան խմբի անդամները պարգեւատրւեցին ոսկէ մեդալներով եւ գնահատագրերով:

ՆՈՐ ՀՈՒՂԱՅՈՒՄ ՏՕՆԻԵՅ ՄԱՅՐԵՐԻ ՕՐԸ

Հնագշաբթի՝ ապրիլի 10-ի երեկոյեան Հայ ուս. Զհարմանալ միութեան Նոր Զուղայի մասնաճիւղը նշեց Մայրերի տօնը: Խօսք արտասանեց Սոնիա Միրզաբեկանը եւ յիշեց Վարդանանց հաւատամարտի ընթացքում հայ կանանց դերակատարութիւնը:



Երեկոն վարեց միութեան կրտսեր անդամուիի Վեհանուշ Խուդաբախչեանը՝ լրացուցիչ տեղեկութիւններ փոխանցելով եւ հայ մօրը ձօնած զանազան բանաստեղծութիւններ ասմունքելով: Հնչեցին գեղարւեստական կատարումներ՝ Համաս Մարգարեանի, Լիդա Յակոբեանի եւ Ռիթա Մկրտչեանի միջոցով: Միութեան աւագ անդամուիի Ովսան Ղարախանեանն արտասեց իր գրչին պատկանող մօրը ձօնած բանաստեղծութիւն:

Ուրբաթ՝ ապրիլի 11-ի երեկոյեան, Նոր Զուղայի «Սեւան» սրահում, Փերիոյ կրթասիրաց միութիւնը տօնեց Ս. Կոյսի աւետումը՝ Մայրերի օրը:



Հանդէսը վարեց Ռիմա Թորոսեանը: Ելոյթ ունեցաւ միութեան կենտրոնական վարչութեան նախագահ Հայկ Հայրապետեանը: Գեղարւեստական բաժնում ասմունքեցին Մարտունի Խաչիկեանը, Ամի Սիմոնեանը եւ փոքրիկ Ստեփանիա Յակոբեանը, երգեցին Ժաքլին Պողոսեանը ու Արեգա Յարութիւնեանը՝ Վահե Յարութիւնեանի երգեհոնի նագակցութեամբ: Պարային կատարմամբ ելոյթ ունեցան Մելանիա Շատուրեանը եւ Ալինա Յարութիւնեանի: Հայ մօր դերը հայ ընտանիքի եւ ազգի գոյատեսման գործում նիւթով բանախօսեց բազմավարտակ ուսուցչուիի Հրանուշ Հայրապետեանը:

«Տարեցների տարւայ» առթիւ միութեան երիցագյոն անդամներ Արեւահատ Բաղումեանը եւ Անդրանիկ ու Նազիկ Յակոբեամները միանաբար հատեցին օրւայ առթիւ պատրաստած կարկանդակը: Երեկոն շարունակւեց խրախնանքով, վիճակախաղով եւ հիւրասիրութեամբ:

Ուրբաթ՝ ապրիլի 11-ի երեկոյեան, Ն.Զ. Հանանց Գթութեան միութիւնը ազգային ծերանոցում նշեց Մայրերի տօնը: Բացման եւ շնորհաւորանքի խօսք արտասանեց վարչութեան նախագահ Արմինէ Սիմոնեանը: Բանախօսութիւն ներկայացրեց Սոնիա Բաղումեանը՝ շեշտելով հայ մօր դերի մասին՝ ընտանիքի մէջ հաւասարակշողութիւն եւ արդարութիւն հաստատելու համար:



Երգերի շարանով ելոյթ ունեցաւ Մասիս Պարսամեանը՝ Անդրէ Պարսամեանի երգեհոնի նագակցութեամբ: Ծրագիրը շարունակւեց ուրախ մթնոլորտում եւ աւարտին «Հայակական ժողովրդական տարագներ» գիրքն իբրեւ յուշանելէր յանձննեց ներկաներին:

Հնագշաբթի՝ ապրիլի 10-ի երեկոյեան, Ն.Զ. Հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանը «Ալենուշ Տերեան» սրահում, Մայրերի տօնին նիդրած գողութիւն միջոցառմամբ մեծարւեցին սաների մայրերն ու տատիկները:



Բացման եւ շնորհաւորանքի խօսք ասաց ուսուցչուի Անեթ Ղազարեանը: Գեղարւեստական յայտագիր ունեցան դպրոցի փոքրիկ սաները՝ սրտաբուխ խօսքերի, մայրիկներին եւ տատիկներին մեծարող երգերի եւ արտասանութիւնների ներկայացումով: Բանախօսեց Հրանուշ Հայրապետեանը, իր խօսքերի մէջ անդրադառնալով հայ գրականութեան մէջ հայ մօր ունեցած մեծ նշանակութեան եւ արժէքի մասին:

Վերջում տեղի ունեցաւ ընդունելութիւն:

ԻՐԱՆԱՀԱՅ ԳԱՐԱՄԱՅԻՆ 26-ՐԴ ԽԱՂԵՐ



Թերթանի Հայ մշակութային «Արարատ» կազմակերպութեան հիմնադրման 70-ամեակին նվիրած Գարնանային 26-րդ խաղերի հանդիսաւոր բացումը, Աերկայութեամբ Թերթանի եւ Սպահանի պաշտօնական հրահրեալների, մարզական պատկրակութիւնների, միութենականների եւ հոծ բազմութեան տեղի ունեցաւ հիմքաբարի՝ 2014 թականի մարտի 20-ի երեկոյեան ժամը 7:00-ին, խաղերը կազմակերպող Նոր Զուղայի հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մարզարանում:



Խաղերի պաշտօնական բացման հանդիսութիւնը մեկնարկեց հանդիսավարուիու ողջոյնի եւ բացման խօսքերով, որից յետոյ միութեան Ակադեմիական միաւորի Արի-արենուշական հատածի եւ երեց փաղանգի Աերկայացուցիչների մասնակցութեամբ կատարեց դրօշակի արարողութիւն եւ Աերկաների յունկաս ունկնդրութեամբ հնչեց Իրանի իսլ. հանրապետութեան հիմներով, ապա տեղի ունեցաւ մարզական պատիրակութիւնների տողանցքը մասնակցութեամբ՝ Թերթանի Հայ մշակութային «Արարատ» կազմակերպութեան (Հ.Մ.Ա.Կ.), Հայ Մ.Մ. «Սիփան» միութեան, Հայ ուսումնասիրաց «Զիարմահալ» միութեան, Հայ Մ. «Րաֆֆի» համալիրի, Հ.Մ.Ա.Կ.-ի Թարթիզի մասնաճիւղի, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան եւ Շահնշահրի մասնաճիւղի մարզական պատկրակութիւնների:

Մարզական փառատօնի առթիւ ողջոյնի խօսքով

հանդէս եկաւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ գերջ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը՝ իր ուրախութիւնը յայտնելով այս շրջանի խաղերը Հ.Մ.Ա.Կ.-ի հիմնադրամն 70-ամեակին նվիրած լինելու կապակցութեամբ: Ելոյթների շարանում արտայալուեցին Նոր Զուղայի հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնական վարչութեան նախագահ՝ Մասիս Մինասեանը, Հ.Մ.Ա.Կ.-ի վարչութեան ներկայացուցիչ՝ Ռուբինա Գալստեանը եւ Իրանի իսլ. խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, որն ի յարգանք պարսիկ հրափրեալների ելոյթ ունեցաւ պարսկերէն լեզուվ:

Ծրագրի յաջորդ բաժնում մուտք գործեց ջահակիր խումբը, իր հետ բերելով Ս. Ամենափրկչեան վաճքի շրջափակում գտնող Ապրիլեան եղենի նահատակների յիշատակը յաւերժացնող յուշարձանի կրակով վառած ջահը, որով բռցավառւուց իրանահայ Գարնանային 26-րդ խաղերի ջահը՝ գլխաւոր ջահակիր, բազկամարտի Ասիայի ախոյեան՝ Օշին Տէր-Գրիգորեանի միջոցով:



Նշելի է, որ մինչ խաղերի պաշտօնական բացումը, նոյն օրը երեկոյեան ժամը 4:00-ին, Աերկայութեամբ ազգային իշխանութեան Աերկայացուցիչների, միութեան կենտրոնական վարչութեան, խաղերի կազմակերպիչ յանձախմբի եւ մարզական միաւորի Աերկայա-

ցուցիչների, ջամը վառեց եւ օրինեց թեմակալ առաջնորդ՝ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը եւ այն յանձնեց գլխաւոր ջահակրին, ով վազրով այն փոխադրեց միութեան կենտրոնատեղի, որին միացան երկրի եւ նահանգի մակարդակում յաջողութիւն արձանագրած բակետըլիստուիր՝ Մանէ Ցովսէփեանը եւ լողորդուիր Անի Մկրտչեանը:

Խոհրդանշական կրակը վառելուց յետոյ, մարզիկ-ների եւ իրաւարար կազմի ներկայացուցիչների միջոցով կատարւեց երդման կարգը: Մթնոլորտն առաւել խանդավառեցին միութեան Մշակութային միաւորի «Կոռունկ» համոյթի ներկայացմամբ գարունն աւետող շքեղ բեմականացումը, պարային համարները եւ համոյթի ու Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախմբի երիտասարդ մենակատարների երգերի կատարումները:



Երեկոն աւարտւեց շնորհակալական խօսքերով, ուղղական բոլոր նրանց, որոնք իրենց համագործակցութիւնն էին ցուցաբերել այս շրջանի խաղերը իրականացնելու գործուն եւ յաշողութեան մաղթանքներով ուղղական մարդիկ-ուժիւթերին եւ հրավառութեամբ:



Թրականիս մարտի 25-ի երեկոյեան, Ն.Զ. Հայ Մ.Ա. «Արարար» միութեան մարզարարում, տեղի ունեցաւ Գարնանային 26-րդ խաղերի փակման հանդիսութիւնը: Ծրագրի սկզբում հաղորդավարութին խաղերի կազմակերպիչների անունից շնորհակալական խօսքեր ուղղեց՝ բոլոր նրանց, որոնց համագործակցութեամբ իր յաջող աւարտին հասաւ այս շրջանի խաղերը, ապա բասկետբոլի մարզաճիւղի յաղթող խմբերին շնորհիւց՝ վկայագրեր, մեռանեն ու աւատթեն:

Նշելի է, որ մարտի 24-ի երեկոյեան կայացաւ սեղանի թենիսի մեդալաբաշխման ծրագիրը: Վկայագրերը, մեդալներն ու գաւաթները յանձնեցին՝ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետը, միութեան Կենտրոնական վարչութեան, Մարզպական միաւորի վարչութեան եւ Կազմակերպիչ յանձնախմբի անդամ-ուիհիները, որից յետոյ մասնակցութեամբ միութեան Ակադեմիական միաւորի Արի-արենուշական հատածի եւ երեց փաղանգի, տեղի ունեցաւ դրօշակի իշեցման արարողութիւնը, որին յաջորդեց խաղերի կրակի մարումը:

Մինչ փակման հանդիսութիւնը, հոծ բազմութեան խրախուսանքների ներքոյ պայքարեցին եղարափակիչ փոլ անցած Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան եւ Հայ Մ.Մ. «Րաֆֆի» համալիրի տղայոց երեց բասկետբոլի խմբերը. արդիւնքում 47-75 հաշտով մրցադաշտից յաղթող դուրս եկաւ հիւրենկալ միութեան թիմը:



**ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԱՌԹԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ
ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ**

Ն.Զ. հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Երեցների միաւորի վարչութեան նախաձեռնութեամբ եւ համագործակցութեամբ միութեան Մշակութային և Ուսանողական միաւորների, կիրակի՝ մարտի 2-ի երեկոյեան միութեան մարզարարում նշեց հայկական աւանդական բուն բարեկենդանը:



Հանդիսութեան բացումը կատարեցին հանդիսավարներ՝ Ալինա Տէր Սուրբիանեանը եւ Շաղիկ Մատթեոսուեանը, որոնք ողջունելով ներկաներին մի շարք տեղեկութիւններ փոխանցեցին Բարեկենդան տօնի մասին, ապա աւելի քան 60 տարազաւորներ, մասնակցեցին կերպարների ներկայացման-մրցոյթին: Հստ

**Ն.Զ. ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՎԱՆԴԵՍ-ՎԱՃԱՌՔ**

Ուրբաթ՝ մարտի 7-ի կեսօրից յետոյ ժամը 3-ից, Ն.Զ. Հայուիեաց բարեգործական ընկերութեան վարչութեան միջոցով եւ անդամուիթների համագործակցութեամբ, առաջին անգամը լինելով, բարեսիրական ցուցահանդէս-վաճառք կազմակերպեց իրանական «Նորուց»-ի եւ Զատկայ տօնի առիթով ընկերութեան հաւաքատեղիում:



Ցուցահանդէս-վաճառքին ներկայացան հայ եւ պարսիկ այցելու-

իրաւարար կազմի քննարկումների, արդիւմքում ընտրութեցին լաւագոյն տարազաւորները, որոնք գնահատուեցին յուշանւերներով: Մրցոյթի աւարտին հնարաւորութիւն տրեց նաեւ շայտագրած մեծ թուվ տարազաւորների՝ ցուցադրել իրենց հետաքրքիր մտայլացումներով իրականացրած կերպարները, որից յետոյ բեմը տրամադրուեց համայնքի սիրուած երգիչ՝ Արդին Ղարախանեանին, իսկ ներկաները վայելեցին Երեցների միաւորի պատրաստած աւանդական ճաշերն եւ ուտեսաները:

Նշելի է, որ երեկոյի բեմային ծրագիրը ապահովել էր Մշակութային միաւորը: Նախատեսել էր նաեւ տեղի վրայ օրւան պատշաճ դիմայարդարման հնարաւորութիւն, որի համար իրենց համագործակցութիւնն էին բերել Ուսանողական միաւորի անդամութինները:



Իրաւարար կազմը ներկայացնում էին միութենականներ՝ Սալիկ Մինասեանը, Վարդումի Ցովսէփեանը, Ժանջիկեանը, Մառիթա Վարդումեանը եւ Նայիրի Ղազարեանը:

Ենք, ովքեր մօտկից հայուիու բարձրանաշակ ձեռարւեստի ականատեսը լինելով, գնահատանքի խօսքեր ուղղեցին մտայլացման եւ ցուցադրուած իրերի կապակցութեամբ: Վաճառքի էին դրւել զոյգ տօների առնչութեամբ զարդեր, գործած տիկնիկներ, տօնական եւ աւանդական խմորեղէններ ու թխածքներ, առիթին պատշաճ նախշերով սեղանի ծածկոցներ, տարբեր ձեւաւորումներով իրանական «Հաֆթսին», ինչու չենաեւ գարնանային շունչ հաղորդող գեղեցիկ յարդարմամբ արհեստական ծաղկեններ: Կազմակերպել էր նաեւ ճոխ բիփէ, որտեղ ներկաներն առիթ ունեցան ճաշակելու համեն ուտելիքներ:

Բարեգործական ընկերութիւնը ելնելով իր առաքելութիւնից, սոյն ցուցահանդէս-վաճառքի հասոյթը ծառայեցնելու է բարեսիրական աշխատանքների իրագործմանը:

ՄԻՋԻՆ-ԲԻ ԱՌԹԻԻ ՄԻՋՈՅՎՈՒԹ ԸՆԿՐԱՆԵԱՐԳՈՒՄ

Զորեքշաբթի՝ 2014 թւականի մարտի 26-ի առաջտեան Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տեղի ունեցաւ Արեւագալի արարողութիւն, որին մասնակցել էին Շահինշահրի համայնքի մեծ թուվ անդամներ: Առաւտեան արարողութիւնից յետոյ, Շահինշահրի Հայ կանանց եկեղեցափրաց միութեան նախաձեռնութեամբ «Սրբոց Վարդանանց» դպրոցի փոքր սրահում տեղի ունեցաւ գեղեցիկ միջոցառում Միջինքի առիթով, որին ներկայ էին Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգչ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, Շահինշահրի հայ համայնքի վարչութեան ներկայացուցիչները և Շահինշահրից ու Նոր Զուղայից իմ եկած հաւատացեալ հայորդիներ:



Ծրագրի բացումը կատարեց Շահինշահրի Հայ կանանց եկեղեցափրաց միութեան նախագահ տկն. Անամիտ Օհանեանը, ով իր խօսքում նախ շնորհաւորեց ներկաների գարունը, ցանկանալով բոլորի կեանքի համար գարնան թարմութիւն եւ ծաղկունք, ապա ամփոփ բացատրութիւն տալով Միջինքի աւանդութիւնների մասին, այսպէս ասաց. «Միջինքը եկեղեցական օրացոյցի համաձայն որեւէ բացատրութիւն չունի եւ պարզապէս ցոյց է տալիս թէ Մեծ պահքը արդէն իր կէսին է հասել: Սակայն ժողովուրդն այդ օրը յիշում է յատուկ զեղեցիկ եւ հետաքրքիր սովորութիւններով, որոնցից բախտախաղը մինչեւ այժմ պահպանւել է»: Տկն. Օհանեանը պատմեց, որ անցեալում բաղարջ էր թիսում եւ մէջը ոսկի կամ դրամ դրտում, որն ում որ բաժին հասներ՝ այդ տարտայ առատութիւնը նրան էր վերագրում: Նա վերջում ցանկացաւ, որ աւանդութիւնները պահպանւեն եւ փոխանցեն նոր սերնդին:

Չարունակութեան մէջ խօսեց հոգչ. Հայր Սուլբը: Նա եւս իր հերթին շնորհաւորեց բոլորի գարունը եւ յայտնեց՝ թէ Միջինքը առիթ է հաւատացեալներին յիշեցնելու իրենց արարքների մասին պահեցողութեան ժամանակաշրջանում: Հոգչ. Հայր Սուլբը շեշտեց, որ իսկական քրիստոնեայի համար ամէն օր պահեցողութեան օրեր եւ ալօթքի պահեր են եւ հաւատացեալը պէտք է ամէն օր իր սիրուն ու հոգին մաքուր պահի:

Նա իր խօսքը շարունակեց ասելով. «Այնպէս ինչպէս մենք մեր տները մաքրում եւ պատրաստում ենք հիւր ընդունելու, առաւել եւս պէտք է նախապատրաստել եւ սրբացած վիճակով դիմաւորել Քրիստոսի հրաշափառ ծարութեան տօնը՝ Քրիստոսին արժանի կերպով մեզ հիւր կանչելու համար»: Նա վերջում գնահատեց Կանանց միութեան տարած բոլոր աշխատանքները, ինչպէս նաև Միջինքի առիթով կազմակերպած միջոցառում առթիւ, ցանկանալով նրանց ուժ, կորով եւ երկար տարիների խանդակառ աշխատանք, ապա իր շնորհակալական խօսքերն ուղղեց Շահինշահրի հայ համայնքի վարչութեանը, որը միշտ թե եւ թիկունք է կանգնում ծրագրերի իրականացման գործում: Հոգչ. Հայր Սուլբի արտապայտութիւններից յետոյ անակնկալ կերպով նշեց տիրացու Ռազմիկ սրկ. Գալստանեանի ծննդեան օրը եւ շնորհաւորանքների փոխանցւեց նրան:



Հայ կանանց եկեղեցափրաց միութեան անդամութիւնները Փերիայի մախտիսով, Զհարմահայի բանշարի ապուրով եւ փարինչէ փլաւով ճաշի սեղան էին պատրաստել, որից համտեսեցին բոլոր ներկաները, որից յետոյ Փերիայի եւ Զհարմահայի տարագներով երկու կանայք Միջինքի բախտախաղի կարկանդակ բաժանեցին ներկաներին:

Շահինշահրի հայ համայնքի վարչութեան ատենապետ պրն. Մելքոն Շիրանեանն եւս իր հերթին շնորհակալութիւն յայտնեց Կանանց եկեղեցափրաց միութեանը՝ բոլոր ազգային, մշակութային եւ աւանդական տօնախմբութիւնները նշելու նախանձախնդրութիւն ունենալու կապակցութեամբ: Ապա տկն. Քարմէն Շահինշանեանը հանդէս եկաւ «Նւէր սիլուքահայերին» գեղեցիկ ասմունքով:

Վերջում Կանանց միութեան նախագահ տկն. Օհանեանը յատուկ շնորհակալութիւն յայտնեց Շահինշահրի «Նարեկ» երգչախմբի անդամութիւններին եկեղեցական արարողութիւններին եւ յատկապէս Մեծ պահոց ժամանակաշրջանում ամենօրեայ ներկայութեան եւ եկեղեցական երգեցողութիւնները կատարելու համար:

ՍՐԾՈՑ ՎԱՐԴԱՆԱԿՆՑ ՏՕՆԻՆ ՆԻՒՐԻԿՄ ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ԶԵՌՆՎԱՐԿ ԾԱՀԻՆՇԵՎՐՈՒՄ

Հինգաբրթի՝ 2014 թւականի մարտի 6-ի երեկոյեան, Ծահինշահրի հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սաները Շեշտին Սրբոց Վարդանանց տօնը: Ծրագրին ներկայ էին Ծահինշահրի հոգեւոր տեսուչ հիգշ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը, Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի և Ծահինշահրի հայ համայնքի Վարչութեան ներկայացուցիչներ, ուսուցիչներ, սաների ծնողները և համայնքի անդամները:



Ծրագրի բացումը կատարեց դպրոցի ուսուցչութիներից տկն. Քարմէն Մատթէոսեանը՝ Վարդանանց ճակատամարտին նվիրած բանաստեղծութեամբ: Նա իր խօսքում նշեց թէ հայը աշխարհի որ ծայրում էլ որ ապրի՝ պէտք է վաս պահի իր ազգային ոգին ու հայի նկարագիրը՝ պահպանելով իր լեզուն և Վարդանանց ոգով ներշնչելով միշտ պայքարի ազատ ու անկախ ապրելու համար: Ապա բեմ հրաւիրեց օրուայ բանախոս տկն. Վիոլեթ Յարութիւնեանին՝ Վարդանանց շունչը փոխանցելու ներկաներին: Բանախոսն իր խօսքում նշեց. «Երբ խօսում կամ խորհում ենք Վարդանանց մասին, այնտեղ գտնում ենք նահատակութեան, անձնագոհութեան եւ մարտիրոսութեան գաղափարաբանութիւնը, որով դաստիարակւել, դաստիարակւում եւ դեռ պէտք է դաստիարակւեն բազում սերունդներ. որեւէ գոյատեւած ազգ պարտական է իր նախնիների թողած աւանդին, կամքին ու ոգուն պատմութիւնը չի կերտում միայն զարերի գումարով, այլ այն կերտում է քաջարի զաւակների, մեծերի ու ռահվիրաների քաջագործութիւնների եւ սիրագործութիւնների շնորհիւ»: Տկն.

Յարութիւնեանն իր բանախոսութեան աւարտին յիշեց այս օրերում հայրենի երկրի սահմանների վրայ գտնուղ զինծառապղղւերին, եւ շեշտեց, որ նրանք եւս մեր հերոսների ժառանգները լինելով՝ իրենց կեանքի գնով են պաշտպանում հայրենականն ու ազգի անվտանգութիւնը, եւ իր խօսքն աւարտեց Հայաստանի Հանրապետութեան հիմնի գեղեցիկ բառերով՝ «Ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ պիտ մեռնի. բայց երանի՛, որ իւր ազգի պատութեան կը զոհվի»:



Բանախոսի բովանդակալից արտավայտութիւններից յետոյ, Վարդանանց ոգով լեցուն աշակերտ-ուինները կատարեցին Սրբոց Վարդանանց եւ հայրենիքին նվիրած գեղեցիկ խմբերգեր, մեներգեր եւ ասմունքներ: Երգերի ուսուցանումը կատարել էին տկնքք. Ալիս Մկրտչեանը եւ Մատթիա Քէշշեանը, իսկ սաներին նագակցում էր տկն. Աննա Դանիէլը: Ասմունքողների հետ աշխատել էր տկն. Քարմէն Մատթէոսեանը:



Աշակերտները միայն երգերով եւ ասմունքներով չբաւարարեցին

եւ բեմականացրին գեղեցիկ եւ բովանդակալից մի Աերկայացում՝ Սրբոց Վարդանանց ճակատամարտի մասին։ Սահերը գեղեցիկ դերակատարութեամբ Ղետնի Երէցի, Վարդան Մամիկոնեանի եւ քաջարի հայորդիների շունչն ու ոգին Աերշնչեցին Աերկաներին։ Նրանք իրենց Աերկայացումով ապացուցեցին, որ դեռ Երկա՞ր է հրաշագործելու Սրբոց Վարդանանց հերոսամարտից հաղորդող լիցքերն ու ապրումները, եւ նրանց անձնազոհութիւնը պէտք է օրինակ դառնայ իրաքանչիւր հայորդու համար՝ իր ապագան արժանավայտ կերպով կերտելու եւ իր կեանքն ապրելու հսկական հայի նկարագրով։ Ներկայացման բեմադրիչ եւ սենարիստն էին տկնք. Վարդուիի Պողոսեանը եւ Վիլեթ Յարութիւնեանը, իսկ զգեստների ձեւաւորման, դիմայարդարման եւ բեմայարդարման աշխատանքը կատարել էր տկն. Անահիտ Այսազեանի միջոցով։

Գեղարևեստական յայտագրից յետոյ, տկն. Քարմէն Մատթէոսեանը շնորհակալական խօսքեր ուղեց նախ ծնողներին, ովքեր իրենց չերմ համագործակցութեամբ եւ աշակերտներին խրախուսելով՝ օժանդակեցին օրուայ ծեռնարկի իրականացման աշխատանքներին, բոլոր այն ուսուցչութիներին, ովքեր ոչ մի շանք չխնայեցին ծեռնարկը կատարեալ կերպով իրագործելու, դպրոցի Ծնողական խորհրդի անդամներին, ովքեր իրենց համագործակցութեամբ աւելի դիւրին դարձրին աշխատանքը, Արու-

թին Հայնազարեամին՝ Աերկայացման ընթացքում երաժշտութեան համադրումները կատարելու համար եւ Մարտիկի Յովհաննիսեամին, ով ծրագրի ամբողջ ընթացքում անթերի ձայն ապահովեց։



Վերջում բեմ հրավիրւեց հոգԶ. Հայր Սուրբը՝ ծեռնարկի փակման խօսքն արտայայտելու համար։ Նա շատ գեղեցիկ բնաբանով սկսեց իր խօսքը, ասելով թէ՝ ինչքան էլ օտարի տանը ապրեն շքեղ ու փառաւոր կեանքով, միեւնյնն է՝ երբ չունես քո լեզուն, երբ վտանգուած է քո ազգային գիտակցութիւնն ու դիմագիծը, նոյն ծառան ես եւ օտարի ստրուկը, եւ նշեց, որ Վարդանանք այս ոգով գնացին դէպի Աւարայր, մահ ու նահատակութիւն՝ փաստելու համար թէ քրիստոնէութիւնը մեզ համար զգեստ չէ, այլ՝ մաշկի գոյն։ ՀոգԶ. Հայր Սուրբն ընդգծելով ասաց, որ Հայաստանեաց առաքեական սուրբ եկեղեցին քարոզել եւ քարոզում է Սրբոց Վարդանանց հաւատարմութիւնը հանդէպ քրիստոնէութեան, որի շնորհիւ այսօր մենք ապրում ենք հայուն եւ աստածապատութեամբ։ Նա գնահատեց աշակերտների եւ իրենց ուսուցչների տարած աշխատանքը օրուայ ծեռնարկն իրականացնելու համար եւ շեշտեց, որ սամերի կատարած ոգեշնչող երգերի եւ գեղեցիկ Աերկայացման միջոցով Սրբոց Վարդանանց հերոսամարտի պահերը վերապրեցին բոլորը։



«ՄԱՅՐԵՐԻ ՏՈՒ»-Ը ՆԵՐԵՅ ՇԱՄԲԱՇՐՈՒՄ

Զորեքշաբթի՝ 2014 թականի ապրիլի 9-ի առաւտեան Շահինշահրի հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սամերը գեղարևեստական ծեռնարկով տօնեցին մայրերին նիրուած գեղեցիկ տօնը։



Սրահում Աերկայ էին հայոց դպրոցի ուսուցական կազմը եւ սամերի ծնողները։ Ծրագրի բացումը կատարեց դպրոցի ուսուցչուի Անահիտ Այսազեանը բարի գալստեան եւ շնորհաւորանքի խօսքեր ուղելով բոլոր Աերկայ մայրերին։ Նա խօսելով մօր առաքինութիւնների ու մարդու կեանքում նրա ունեցած նշանակութեան մասին, «մայր» բառի մէջ թագնած գտաւ սրբութիւն, գեղեցկութիւն, քնքանք, բարութիւն եւ քաղցրութիւն, որը մարդկային լեզուն անկարող է դրան բացատրել։ Տկն. Այսազեան իր խօսքի մէջ ասաց. «Աստած կնոջն ստեղծեց՝ գաւակներ ունենալու եւ մայր դառնալու համար, ով կեանքի ճիշտ ուղին պէտք է ցոյց տայ իր մանկանը, մինչեւ նրա մեծանալը։ Հայ մայրը

Ժնում եւ սնուցանում է քաջ զինւոր եւ նրա մէջ սերմանում ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը», ապա շարունակեց. «Իւրաքանչիւր մարդու համար գոյութիւն ունի միայն մէկ բարի, գեղեցիկ եւ ազնիւ մայր՝ որին ոչ մի այլ բանով չի կարելի փոխարինել»: Տկն. Ալյազեանն իր խօսքերի աւարտին կրկին շնորհաւորեց տօնի կապակցութեամբ, ցանկանալով որ հայ մայրերը միայն տեսնեն իրենց զաւակների յաջողութիւններն եւ ուրախութիւնները, ապա բոլորին հրաիրեց վայելու հայոց դպրոցի աշակերտների կողմից պատրաստած գեղարիւսական ծրագիրը:

Ծահինշահրի հայոց ազգային «Սրբոց Վարդանց» դպրոցի տարրական օղակի սաներն իրենց ուսուցիչների ղեկավարութեամբ մատուցեցին մի համեստ գեղարիւսատական յայտագիր. նրանք երգերի եւ ասմունքների միջոցով գովասանքներ ծօնեցին իրենց մայրերին, որը թէ ուրախութիւն եւ հրճանք եւ թէ յուզմունք առաջացրեց նրանց պրոց:

Ծրագրի փակումը կատարեց պրո. Զանիկ Թահ-

մազեանը. նա եւս իր ներթիմ շնորհաւորեց տօնի կապակցութեամբ՝ ցանկանալով բոլոր հայ մայրերին քաջառողջութիւն եւ երջանիկ կեանք:



Վերջում տկն. Ալյազեանը յատուկ շնորհակալութիւն յայտնեց դպրոցի Ծնողական խորհրդի անդամներին՝ համագործակցելու համար: Ծնողական խորհրդի կողմից Երևաների համար պատրաստել էր համեստ հիւրասիրութիւն, որից օգտվեցին բոլորը:



ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻ ՄԵԾԱՐՈՒՄ՝ «ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏԱՐԻԱՅ» ՇԱՀԻՆՇԱՋՐԻ ՅԱՆՉԱԽԱՄԲԻ ՄԻՋՈՑՈՎ

Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա Վեհափառ Հայրապետը 2014 թւականը հոչակել է «Տարեցների տարի»: Տարին արժեւորելու համար Ծահինշահրում կեանքի է կոչել յանձնախումբ, որի նախատեսած միջոցառումների մեկնարկն եղաւ Մայրերի օրւան նիդրած ձեռնարկը:



Հինգաբթի՝ 2014 թւականի ապրիլի 10-ի երեկոյեան Ծահինշահրի հայոց ազգային «Սրբոց Վարդանց» դպրոցի սրահում նշեց մայրերի տօնը: Երեկոյի բացումը կատարեց տկն. Վարդուհի Պողոսեանը. նա ողջունելով հայ մայրերին, շնորհաւորեց տօնի կապակցութեամբ եւ հայ մօր ուսերին ծանրացած առաքելութիւնը մեծարելով ու պատմութեան ընթացքում նրա

կատարած սիրանքները դրաւատելով՝ մեծ գնահատանքի արժանի համարեց նրանց:

Ծրագիրը շարունակեց գեղարիւսատական յայտագրով. տօնական երգերով հանդէս եկաւ Ծահինշահրում նոր կազմաւորած Շագախումբը՝ Վիլսոն Յարութիւնեամի մենակատարութեամբ: Ելոյթ ունեցան Ժամնա Շահիբագեանը եւ Աղենա Ալյազեանը՝ գեղեցիկ ասմունքներով:



Տեղի ունեցան նաև հետաքրքիր մրցութիւններ՝ ամուսնացեալ զոյգերի եւ մայրերի համար, որոնք նորութիւն լինելով՝ խանդավառութիւն ստեղծեցին դահլիճում եւ տօնակատարութիւնը դարձաւ աւելի հաճելի:

Ծրագիրը շարունակեց ուրախ ժամանցի տեսքով:

ԾԱՀԱՅԱԼՄԱՆ ԻՆ ՊԱՍՏՈՐԻ ՎՐԱ ՇԱՄԲԱՆԴԱՌՈՒԹՅՈՒՆ

Կիրակի՝ 2014 թւականի ապրիլի 13-ի առաւտեան, Շահինշահրի հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում, Ծաղկազարդի տօնի առիթի Ս. Պատարագ մատուցեց ձեռամբ Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգէ. Տ. Անանիա վրդ. Գումանեանի:



Ս. Պատարագին ներկայ էին Շահինշահրի հայ համանքի վարչութեան ներկայացուցիչները, հայոց դպրոցների աշակերտ-ուինները եւ ուսուցիչները ու մեծ ժողովուրդ:

Ցընթացս Ս. Պատարագի, հոգէ. Հայր Սուրբն ինչպէս միշտ իր գեղեցիկ եւ իմաստալից քարոզով օրուայ խորհուրդը փոխանցեց ներկայ հաւատացեալներին՝ անդրադառնալով Քրիստոսի Երուսաղէմ կատարած յալթական մուտքի աւետարանական դրագին եւ խոնարհութեան եւ աշխարհիկ փառքից ու ժամանակավրէկ հաճոքներից հեռու՝ պարզունակ կեանք ապրելու օրինակը վերաբերեց՝ Քրիստոսի կեանքի օրինակով, եւ յորդորեց հաւատացեալներին՝ Քրիստոսին դիմաւրած եւ օրիներգած մանուկների պէս անմեղանալ եւ սրբացած սրտով ու հոգով ընդունել աշխարհի Փրկչին իրենց կեանքում:

Հոգէ. Հայր Սուրբն իր խօսքի մէջ նաեւ Քրիստոսի

բերած ուրախութեան եւ նոր կեանքի խորհրդանիշ համարելով ձիթենեաց կանաչ ճիւղեր՝ աղօթեց, որ տուն տարւելիք ճիւղերի հետ միասին Քրիստոսի նոր շունչն ու լոյսը տարածի հաւատացեալների տներում:

Ս. եւ անմահ Պատարագի աւարտին Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան անդամուիհիների միջոցով զարդարած ձիթենու ճիւղերն օրինեցին հոգէ. Հայր Սուրբի միջոցով եւ բաժանեցին ներկայ հաւատացեալների միջեւ, ովքեր այն տուն տարան շերմեռանդուրթեամբ եւ այն խոր համոզումով, որ այդ օրինութիւնը լինելու է նաեւ իրենց տան վրայ:



Ծաղկազարդը կոչում է նաեւ Գալուստ՝ որպէս Փրկչի մեսիաբար Երուսաղէմ գալուստի եւ չարչարանքների խորհրդանիշ: Այս պատճառով՝ դրան կցում է նաեւ Քրիստոսի երկրորդ կամ վերջին գալստեան յիշատակը, որը կատարում է երեկոյեան պաշտամունքի ժամանակ՝ ի պատկեր վերջին դատաստանի եւ աստւածային արդարութեան: Կիրակի երեկոյեան՝ բազմաթի հաւատացեալների ներկայութեամբ, տեղի ունեցաւ Դոնքացէրի խորհրդաւոր արարողութիւնը, որի ընթացքում հոգէ. Հայր Սուրբը երգեց «Բա ց մեզ, Տէ ո՞» յուզիշ շարականը եւ խորհուրդ արած կանանց միջոցով բացւեց 40 օրից ի վեր փակած մնացած Ս. Խորանի վարագոյրը:



ԱԻՆՔ ԾԱԲԱՌԸ ԵՒ Ս. ԶԱՏԻՐԿԸ ԾԱՀՐԱԾԱՀՐՈՒՄ

Ծաղկազարդին յաշորդող երթնօրեակը կոչում է Աւագ շաբաթ, որի եկեղեցական արարողութիւններն սկիզբ են առնում Աւագ երեքշաբթի օրը:

Աւագ երեքշաբթի երեկոյեան Շահինշահրում տեղի ունեցաւ ժամերգութիւն, որի ընթացքում ընթերցւեցին Հին Կտակարանից հատածներ՝ մարդու անկման կամ մելքի, Զրինելեղի եւ Նոյեան տապանի միջոցով

փերկած արդարների մասին, ապա օրուայ աւետարանական հաւածը, որ ընթերցւեց Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգէ. Տ. Անանիա վրդ. Գումանեանի միջոցով՝ Երկնքի Արքայութեան մասին Յիսուսի պատմած Տասը կոյսերի առակի վերաբերեալ: Աւետարանի ընթերցման պահին եկեղեցական շապիկ հագած տասը աղջնակներ, ովքեր ներկայացնում էին առակի հինգ իմաս-

տուն եւ հիմգ յիմար կոյսերին, վառած մոմերով կանգ-
նեցին Ս. Խորանի առջեւ: Արարողութեան աւարտին
Հայր Սուրբն իր քարոզի մէջ ակնարկելով օրուայ
խորհրդի մասին, բացատրեց առակի հմաստը. նա շեշ-
տելով քարեգործութեամբ ու առաքինի կեանք վարելու
եւ յափեանական կեանքին արժանանալու համար
«պաշար» հաւաքելու մասին, Ասոնուց խնդրեց, որ
յատկապէս արարողութեանը մասնակից դարձած բո-
լոր աղջնակներին իմաստութիւն պարգևեի եւ գնահա-
տեց նրանց ներկայութիւնը եւ մասնակցութիւնը արա-
րողութեանը:



Ապրիլի 17-ը՝ Աւագ հինգշաբթի օրը, Տէրունական
ընթրիքի եւ Ս. Հաղորդութեան խորհրդի հաստատման
տօնն էր: Առաւոտեան Ս. եւ անմահ Պատարագ մա-
տուցեց Շահինշահրի Հայոց եկեղեցում հոգէ. Հայր
Սուրբի միջոցով, տեղի ունեցաւ հաւաքական խոսո-
վանանք եւ ներկաներն ստացան Ս. Հաղորդութիւն:



Նոյն օրուայ երեկոյեան յատուկ հանդիսաւորու-
թեամբ կատարեց Պտնջայի արարողութիւնը: Այս

տարի «Տարեցների տարւայ» առթիւ, Պտնջայի արա-
րողութեանը մասնակից դարձան համայնքի տարեց
անդամները, նրանց յարգանք մատուցելու համար: Արարողութեան ընթացքում օրինած իւղը, որը պատ-
րաստել էր Շահինշահրի Հայ կանանց եկեղեցափ-
րաց միութեան անդամների միջոցով, բաժանեց հա-
ւատացեալ ժողովրդին:



Պտնջայի կարգից յետոյ, կատարեց Խաւարման
երկարաժամ կարգը, որի ընթացքում ընթերցւեցին
աւետարանական եօթ ընթերցումները՝ Քրիստոսի
մատնութեան, չարչարանքի եւ խաչելութեան վերաբե-
րեալ, երգեցին հիասքանչ եւ խորիմաստ բովանդա-
կութեամբ շարականներ ու երգեր:

Արարողութեան ընթացքում, «Փառք ի բարձունս»-
ից յետոյ, երբ եկեղեցու լոյսերը տակալին մարած էին,
յուզիչ ու հոգեզմայլ «Ո՞ւր ես, մայր իմ» երգից յետոյ,
մթութեան մէջ հոգէ. Հայր Սուրբը օրուան պատշաճ իր
խօսքը փոխանցեց ներկայ հաւատացեալներին:



Ապրիլի 19-ի երեկոյեան, Աւագ շաբաթ օրը, Ս.
Զատկի մրագալոյցին, մատուցեց Ս. Պատարագ՝

հոգ. Տ. Անանիա վրդ. Գումանեանի միջոցով: Ս. Պատարագի ընթացքում տեղի ունեցաւ հաւաքական խոստվանանք, որից յետոյ հաղորդւեցին ներկայ հաւատացեալները: Այսպիսով իր աւարտին հասաւ մեծ պահոց ժամանակաշրջանը եւ արարողութեան վերջաւորութեանը հնաչած «Այսօր յարեա ի մեռելոց» շարականի բառերով Քրիստոսի Յարութեան աւետիսը փոխանցւեց բոլորին:

Կիրակի՝ ապրիլի 20-ին, մեր տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ յարութեան տօնի՝ Ս. Զատկի առթիւ հանդիսաւոր Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերջ. Տ. Բարգէն եպս. Զարեանի ձեռամբ, ում սպասարկում էին հոգ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը եւ բրշն. Ռազմիկ սրբ. Գալստանեանը:



Հոգեպարար արարողութեան ընթացքում, քարոզի պահին, գերջ. Սրբազն Հայրը Ս. Զատկայ տօնի առթիւ իր պատգամը փոխանցեց հաւատացեալ ներկաներին՝ բնաբան ունենալով Պօղոս առաքեալի Հոռմէացիներին գրած նամակից այն հատածը, որտեղ գրած է. «Մկրտութեամբ թաղւեցինք Նրա հետ միասին եւ հաղորդ եղանք մահանը, որպէսզի ինչպէս որ Քրիստոսը մեռեներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք ապրենք մի նոր կեանքով»: Գերջ. Սրբազն Հայրն իր քարոզի մէջ ասաց. «Պօղոս առաքեալը թելաղում է մեզ ապրել մի նոր կեանք: Այնպէս ինչպէս Քրիստոսը պէտք է մեռնէր՝ մեռեներից յարութիւն առնելու համար, մենք եւս պէտք է «մեռնենք»՝ թօթափելով հին մարդը՝ մեղանչական մարդը, որպէսզի յարութիւն առնենք Քրիստոսով՝ ապրելու համար մի նոր կեանք: Այնպէս ինչպէս Պօղոս առաքեալը եկեսացիներին գրած իր նամակում ասում է. "Եղէք նոր մարդ՝ ստեղծած Աստծու պատկերի համաձայն, եւ ճշմարիս կեանքն ապրեցէք արդարութեամբ ու սրբութեամբ"»: Պատարագի Սրբազն Հայրն իր քարոզի վերջաւորութեանն

ասաց. «Հայ ժողովուրդն առաջին ազգը հանդիսացաւ, որ հոգեւորապէս մկրտւեց, ընդունեց քրիստոնէութիւնը, դարձաւ ժառանգակիցը Քրիստոսի, ճանաչեց ու հաւատաց Նրան, մեռաւ Նրա համար, թօթափեց հին մարդը՝ մեղանչական մարդը իր վրայից, կրեց ամէն տեսակի տառապանք եւ նեղութիւն, ցեղասպանութեան ենթարկւեց ու նահատակւեց, քայլեց Գողգոթայի ճանապարհով, խաչ բարձրացաւ, թաղւեց Քրիստոսի հետ, բայց հաւատաց բացւող արշալոյսին, հրաշափառ յարութեանը եւ յարութեամբ տրւած նոր եւ առաւել կեանքին: Այսօր մենք ո՞ր ճանապարհոց ենք քայլելու. հին մեղանչական կեանքի, թէ յաւիտենական Արդարի՝ յարութեամբ նոր կեանք պարզեւող նոր Աղամի՝ Քրիստոսի ճանապարհից յաւիտենական կեանքը եւ երջանկութիւնը ժառանգելու: Ազգովին վերանորոգենք մեր հաւատը, յարութեան շնչով քայլենք դէպի պայծառ ապագայ, եւ յարութեան փառքով դէպի լուսաւոր ճանապարհ»:



Ս. Պատարագի աւարտին գերջ. Սրբազն Հայրը հոգ. Հայր Սուրբի, դպրոց դասի եւ Ծամինշահրի «Նարեկ» երգչախմբի կազմած թափօրով դուրս եկաւ դպրոցի բակ եւ այնտեղ պատրաստուած զատկական տաղաւարի մօս, շրջապատուած ժողովրդի բազմութեամբ, ընթերցեց Աւետարանը եւ «Այսօր յարեաւ» շարականի երգեցողութեամբ աւետելով Քրիստոսի յարութեան լուրի՝ բոլորին շնորհաւորեց Ս. Զատկայ տօնի կապակցութեամբ:

Հայոց դպրոցի բակում յատկապէս մանուկ-պատահներն օբաղլած էին աւանդական հաւկթախաղով:

Հարկ է նշել, որ Մեծ պահի եւ Աւագ շաբաթայ բոլոր եկեղեցական արարողութիւնների երգեցողութիւնները կատարեցին Ծամինշահրի «Նարեկ» երգչախմբի միջոցով:

ՀԱՅՈՅ ՑԵՂԱՍՊԱԿՆՈՒԹԵԱՆ 99-ԿՄԵԼԿԻ ՎՈՒԹԻՒ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄՐԱԳՐԵՐ ԾԱՀԻՆՇԱՀՀՐՈՒՄ

Ապրիլի 22, ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱՎԱՆԴԵՄ

Երեքշաբթի՝ ապրիլի 22-ի երեկոյեան, Շահինշահրի հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի փոքր սրահում, տեղի ունեցաւ նկարչութեան եւ ձեռարեւտի ցուցահանդէս՝ Հայոց ցեղասպանութեան թեմայով:



Ցուցահանդէսի բացումը ներկայութեամբ Շահինշահրի հայ համայնքի վարչութեան, Ոգեկոչման յանձնախմբի եւ համայնքի անդամների, կատարեց Ոգեկոչման յանձնախմբի նախագահ Էդվին Բարումեանի եւ հայոց դպրոցի աշակերտների ձեռամբ: Սրահի պատերը ծածկած էին աշակերտ-ութիների եւ համայնքի երիտասարդների նկարած պատկերներով. բոլորն ինչ որ կերպ իրենց գգացումները թղթին յանձնելով՝ նկարագրել էին վայրագ թուրքին, մեր անմեղ ժողովրդին՝ Սիրիոյ աւազների վրայ, Արարատ լեռը եւ մեր եռագոյն դրօշը: Այցելուն դիտելով այդ նկարչութիւնները, մի պահ ոգեւորածութեամբ եւ յոյսով լցած մտածում էր՝ կան եւ շարունակելու են լինել սերունդներ, ովքեր պահինշելու են մեր արդար իրաւունքների վերականգնումը եւ անտարբեր շեն մնալու Հայոց ցեղասպանութեան նկատմամբ:

Յանձնախմբի գեղեցիկ մտայլացումով, սրահում ցուցադրում էր Եղեննին նիրած տեսանիթեր եւ սփուրում երգեր, որոնք մթնոլորտը դարձրել էր աւելի յուզիշ:

Ապրիլի 23, ՀՍԿՈՒՄ ԵՒ ԾԱԿԿԵՄԱՏՈՅՑ

Ապրիլի 23-ի երեկոյեան, Շահինշահրի հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի բակում, Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին կառուցած յուշարձան-խաչքարի առջեւ ի մի եկած հայորդիները նախ մասնակցեցին Հոգեհանգստեան արարողութեանը, որը կատարեց Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգ. Տ. Անանիա Վրդ. Գուճանեանի ձեռամբ եւ Շահինշահրի «Նարեկ» երգչախմբի երգեցողութեամբ:

Հոգեհանգստեան արարողութիւնից յետոյ, Յանձնախմբի անդամ օրդ. Էդման Խաչիկեանը բացման խօսք արտասանեց եւ վարեց համահաւաքի ընթացքը: Օրդ. Թանգիկ Թորոսեանն ընթերցեց Հայոց ցեղասպանութեան 99-ամեակի ոգեկոչման Շահինշահրի

յանձնախմբի խօսքը, որի մէջ շեշտել էր հայութեան բեկրոների միասնականութեան եւ միահամուր լինելու անհրաժեշտութիւնը, որով հայ ժողովուրդը կը կարողանայ իր կոչն ուղղել համայն աշխարհին եւ իր ձայնը լսելի դարձնել՝ իր արդար իրաւունքների վերատիրացման նպատակով, այն համոզումով, որ Մեծ Եղեննից վերապրած հայ ժողովուրդն իր եզակի տոկունութեամբ եւ հետեւողականութեամբ ի զօրու է դիմագրաւել Հայ դատի բազմազան ճակատներում նետած մարտահրաւերները եւ ծանօթացնել նրա իրաւական արժեքը միջազգային աստեաներում: Օրդ. Թորոսեանը Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ Շահինշահրի հայ համայնքի բողոքի ձայնը միացնելով աշխարհասփիւր հայորդիների ձայնին, կոչ ուղղեց նիւրումի ուխտով շարունակել երթը դէպի ազգային շահերի իրականացման՝ ի սպաս դնելով մեր բոլոր նիւթա-բարյական օրութիւնն ու հնարաւորութիւնները, միահամուր ջանքերով դիմագրաւել նոր մարտահրաւերները, որով խափանելով է Թուրքիայի հայահալած ու հակահայ նենգ քաղաքականութիւնը: Նս իր խօսքն աւարտեց՝ «Շուտով կը բացւի հայի արշարյուր եւ մեր տառապած ազգը տէր կը դառնայ իր ոտնահարւած իրաւունքներին» յուսադրիչ նախադասութեամբ:



Այնուհետև Շահինշահրի հայ համայնքի վարչութեան աստենապետ պրն. Մելքոն Շիրանեանն ընթերցեց Համայնքի վարչութեան կոչը Հայոց ցեղասպանութեան առթիւ, որտեղ ասել էր. «Գարնանային արեւոտ եւ պայծառ օրը մեզ՝ բոլոր հայ զաւակներիս ստիպում է անդրադառնալ տարիներ առաջ ծագող գարնանը, որը կարմիր ներկուց ոչ թէ արշարյուսով, այլ մեր անմեղ զոհերի արեամբ: 99 տարիներ անցել են Հայոց ցեղասպանութիւնից, սակայն ոճրագործութեան մոլուցքը խելագարած թուրքը՝ շարունակում է ուրանալ այս իրականութիւնը եւ կատարելագործել իր հակահայ քաղաքականութիւնը, որի պարզ օրինակն է Սիրիայի Քեսսար հայաբնակ շրջանի վերջին դէպերը»: Ապա իր խօսքն ուղղելով աշխարհասփիւր հայ ժողովուրդին, շարունակեց. «Մեր հզօր եւ շեշտակի ձայնը միացնենք բոլոր հայերի ձայնին եւ միասնաբար ու աննահանջ պայքարենք մինչեւ վերջնական յաղթանակ»:

Բողոքի համահաւաքի եւ ծաղկեմատոյցի ընթացքում Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-ճախակրթարանի եւ «Մրոց Վարդանանց» ու «Մասիս» դպրոցների աշակերտ-ումինները խմբերգերի եւ ասմունքների կատարումով իրենց բողոքի խօսքն ուղղեցին բոնակալ թուրք պետութեանը:



Այս տարի Ոգեկոչման յանձնախմբի յատուկ դասաւորումով ապահովվել էին ծաղիկներ, որոնցով բոլոր կազմերը, միութիւնները եւ դպրոցները կատարեցին ծաղկեմատոյց: Ծրագրի պաշտօնական բաժնից յետոյ ծաղկեմատոյց կատարեցին նաև միջոցառմանը ներկայ համայնքի անդամները եւ մոմեր վառեցին զրիերի յիշատակին: Համահաւաքից յետոյ դպրոցի սրահում սկիզբ առաւ Քեսարի դէպքերի թեմայով կլոր սեղան, որը թէեւ երիտասարդական էր, սակայն հրաւիրեցին բոլոր ներկաները՝ մասնակցելու ձեռնարկին:



Կլոր սեղանը վարեցին երիտասարդներ Նինել Աբրահամեանը եւ Վահէ Թահմազեանը: Ծրագրի հիմնական նիւթեն էր Բերիոյ հայոց թեմի հայաբնակ Քեսար քաղաքը եւ վերջին շրջանում Թուրքիայի պետութեան կողմից այնտեղ իրագործած դաժան գործողութիւնները: Պատուադի վրայ ցուցադրուող սահիկներին եւ տեսանիւթին զուգահեռ ամփոփ կերպով ներկայացւեց Քեսարի պատմականը եւ քննարկեցին վերջին իրադարձութիւնների բերումով լրատամիջոցներում տարածած սխալ տեղեկութիւնները:

Ապրիլի 24, ԲՈՂՈՔԻ ՀԱՄԱՎԱԿՔ

Հինգշաբթի՝ ապրիլի 24-ի առաւոտեան, Շահինշահրի «Մրոց Վարդանանց» դպրոցի շրջափակում, Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգչ. Տ. Անամիա վլդ. Գումանեանի ծեռամբ տեղի ունեցաւ Հոգեհանգստեան արարողութիւն՝ նիւթած Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին:



Արարողութիւնից յետոյ հոգչ. Հայր Սուրբն իր պատգամը փոխանցեց ներկաներին, իր խօսքն սկսելով երգի գեղեցիկ եւ իմաստալից բառերով. «Որքան էլ որ պարիսպները մեզ բաժանեն մեր երկրից՝ հրով լինի, սրով լինի, խաչով լինի, գրչով լինի պիտի գնանք վաղ թէ ուշ»: Նա նշեց, որ Հայոց ցեղասպանութիւնից 99 տարիներ անցնելով հանդերձ, դեռևս Թուրքիայի պետութիւնը չի դադարեցրել իր վայրագութիւնները եւ այս անգամ օգտագործելով առիթը, իր նենգ քաղաքականութիւնը շարունակում է Սիրիայում եւ յատկապէս Քեսարում:



Հոգչ. Հայր Սուրբն իր խօսքերի աւարտին գնահատեց Ոգեկոչման յանձնախմբի աշխատանքները եւ Շահինշահրի հայ համայնքի վաշութեան հովանատութիւնը՝ ծրագրերի իրականացման համար, նաև համայնքի այն անդամներին, ովքեր իրենց բոլոր գործերը մէկ կողմ թողած գիտակից կերպով մասնակցեցին ոգեկոչման ծրագրերին:

Հոգչ. Հայր Սուրբի խօսքերից յետոյ, նկատի ունեալով որ այս տարի քայլերթ կատարելու արտօնութիւն չէր տրւել պետական մարմինների կողմից, նոյն

դպրոցի շրջակակում եւ մուտքի առջև հաւաքած պահանջատէր հայորդիները բունցքերը բարձրացրած իրենց բողոքի եւ պահանջատիրութեան ձայնը միացրին աշխարհի բոլոր հայերի ձայնին: Վերջում պրն. Էդվին Բաբումեանի միջոցով ընթերցւեց Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող պարսկերէն լեզով բանաձեւը եւ «Սարդարապատ» երգի միասնական կատարումով աւարտւեց հաւաքը:

Ապրիլ 25, ԳԵՂԱՐԻԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ուրբաթ՝ ապրիլի 25-ի երեկոյան, Շահինշահրի հայոց ազգային «Մրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տեղի ունեցաւ դասախոսութիւն եւ գեղարւեստական ծրագիր՝ նիւրած Ասպրիլեան եղենին գոհերի անմոռաց յիշատակին: Ծրագրին ներկայ էին Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգչ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը, Շահինշահրի հայ համայնքի վարչութեան, միութիւնների եւ համայնքի անդամները:



Զեւնարկի բացումը կատարեց օրդ. Էդնա Խաչիկեանը եւ բեմ հրավիրեց օրուայ բանահոս, Շահինշահրի հայոց ազգային «Մրբոց Վարդանանց» դպրոցի ուսուցչութիւն տկն. Վիլելթ Յարութիւնեանին:

Յարգելի բանախոսը գեղեցիկ եւ ամփոփ կերպով անդրադարձ ունեցաւ Հայոց ցեղասպանութեանն առնչող ճանաչման եւ հատուցման երկու տարրեր բնագաւառներին: Նա անդրադանալով հայոց կոստուրածի եւ իրենց բնօրրանից բոնի տեղահանելու հետեւանքով աշխարհասփիւր հայկական գաղօթախմների ստեղծման իրողութեանը, ընգծեց Հայոց ցեղասպա-

նութեան ճանաչման եւ դրան յաջորդող հատուցման ուղղութեամբ բազմակողմանի եւ բազմաբնոյթ աշխատանքների եւ յատկապէս դիւանագիտական գործութիւնների անհրաժեշտութիւնը, որի համար կարիք են համայն հայութեան ուժերի միաւորումը եւ միասնական ջանքերը:



Բանախոսութիւնից յետոյ ելոյթ ունեցաւ Նոր Զուղայի տաղանդաւոր երիտասարդ-ումինների միջոցով կենքի կոչուած «Ասուա» խումբը: Կենդանի երաժշտութեան ներքոյ մեներգերով հանդէս եկան Փարելի Թահմազեանը, Անասիկ Յովսէփեանը, Վեհանուշ Խուդաբախչեանը եւ Կարէն Խանջարեանը: Իրենց գեղեցիկ ձայնով մեներգեցին նաև Շահինշահրի երիտասարդներից Մարտիկ Յովհաննիսեանը եւ Արութիւն Հախնազարեանը, իսկ ասմունքոց Թանգիկ Թորոսեանը:

Կոկիկ ծրագրի աւարտին բեմ հրաւիրւեց Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգչ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը: Նա իր խօսքի մէջ գնահատեց բանախոսին՝ բովանդակալից նիւթ փոխանցելու համար, նորակազմ «Ասուա» խմբի բոլոր անդամներին եւ Շահինշահրից մասնակցած անձանց, ովքեր ապրիլեան ուժն ու ոգին ներկաների մէջ առաւել վառ պահելու համար ի գործ դրեցին իրենց լաւագոյն կարողութիւնը: Հոգչ. Հայր Սուրբն արժանի խօսքեր ասաց Ոգեկոչման յանձնախմբին եւ բոլոր այն անձանց, ովքեր իրենց ժամանակն ու ամբողջ հնարաւորութիւնները ի սպաս դրեցին՝ ծրագրերի յաջող հրականացման համար:

Հոգչ. Տ. Անանիա վրդ. Գումանեանի ոգեշնչող եւ յուսադրիչ խօսքերով ու կոչով աւարտւեց ծրագիրը:



ՆԻՒՐԱՏԻՌԱԹԻՆՆԵՐ

Սպահանի հայոց բեմի Կրօնական խորհուրդ

Հուսահանգիստ

- 10,000,000-ական ռիալ. Շահէն Ցովսէփեան, Մասիս Ղազարեան:
- 1,000,000-ական ռիալ. Ն.Զ. Հայ Կանանց Գթութեան Միութիւն, Հայկազ Պետրոսեան, Նորիկ Մարկոսեան:
- 600,000 ռիալ. Մինաս Թահմազեան:
- 500,000-ական ռիալ. Հայ ուս. Զհարմանալ միութեան Նոր Զուղայի մասնաճիւղ, Տ. Խաչատուր քին. Զարգարեան, Լեռն եւ Անիթա Ղազարեաններ, Արին Նազարեան, Վազրիկ Միրզայսեան, Ղուկաս Շամիրեան, Ռուբեն Մարկոսեան, Հայշիկ Դիլանչեան, Սարո Ալումեան, Մարօ Դարարիտեան, Քեւին Օհանեան, Արիս Թահմազեան, Վարսենիկ Օրոշեան, Տիգրանուիկ Ղեւեան, Աբրահամ եւ Վոյգա Մեսրոպեաններ, Արմինէ Թորոսեան, Վարուժ Մինասեան, Նժդէն Ստեփաննեան, Նայիրի Մարկոսեան, Նինարէ Մարկոսեան, Զանսոն Աղաբարպեան, Վահագն Մինասեան:
- 400,000 ռիալ. Անդրանիկ եւ Սերժիկ Ասատրեաններ:
- 300,000-ական ռիալ. Ռազմիկ Ցովսէփեան, Արթին Դաւթեան, Բաֆֆի Մկրտչեան, Մկրտչեան, Համար Դարիթեան, Բունիաթեան ընտանիք:
- 220,000 ռիալ. Հայկազ Ղազարեան:

- 200,000-ական ռիալ. Նարդ Ցակորեան, Ցակոր Մարկոսեան, Մանիքա Մայիսեան, Արին Ցովսէփեան, Մալուս Ցովսէփեան, Հայքերթ եւ Քրիստին Օհանեաններ, Վարուժ Մովսիսեան, Գետիկ եւ Լուսինէ Ասատրեաններ, Անդրէ Նազարեան, Կարինէ Զարգարեան, Արին եւ Մինէ Դաւթեաններ, Մատթէոս Պարսամեան, Հրաշ Տէր Ցովհաննիսեան, Զաւէն Մուրադեան, Արամ եւ Լիգիա Մանուկեաններ, Անդրանիկ Ղազարեան, Ցարութ Կիրակոսեան, Աշխէն Փափէլեան, Սենակ Թահմազեան, Մասիս Պարսամեան, Նժդիա Միրզաքեան:
- 150,000-ական ռիալ. Այսի Բարաբասեան, Անուշաւան եւ Հրանչ Աղաբարպեաններ, Արտաշ Մելիքեան, Գալստոն Ղազարեան:
- 120,000 ռիալ. Նայիրի Դաւթեան:

- 100,000-ական ռիալ. Հենրիկ Ցակորեան, Ստեփանիա եւ Սիսիան Ցակորեաններ, Ցարութ Ղուկասեան, Ցովսէփ Օհանեան, Ռազմիկ Մարկոսեան, Ասլան Սարեան, Անգինէ Մարկոսեան, Հրաշ Զոհրաբեան, Մանուկ Ղազարեան, Լորեթա Միրզայտեան, Նարդ Կիրակոսեան, Ֆերէ Պողոսեան, Հայկազ Ցովսէփեան, Զարդէ Ցովսէփեան, Դիհանա Շատուրեան, Գետիկ Զարգարեան, Արինէ, Արամէ, Թարէ եւ Թանգիկ, Ժորժիկ Նազարեան, Նէօմի եւ Լիա Մարկոսեաններ, Տիգրանուիկ Ղեւեան, Բրայեան Փանոսեան եւ Էրիկ Կիրակոսեան, Լինա:
- 50,000-ական ռիալ. Հերմինէ Հայտանան, Ցարութ եւ Հրաշիկ Ղարիթեաններ, Արա եւ Հերմինէ Ցովհաննիսեաններ, ոմն:
- 30,000-ական ռիալ. Փիլիկ Ղուկասեան, Հերոս Ցովսէփեան:

Ն.Զ. Հայոց առաջնական եկեղեցեաց վարդութեան

Հանգուցեալ Մաղիկ Դանիէլեանի յիշատակին

- 2,000,000-ական ռիալ. Վրէժ եւ Ռիթա Թումաթարեաններ, Արտուշ Թումաթարեան, Վահան, Սինիա եւ Վաչէ Սոհիրայիններ

Ո. Գէորգ եկեղեցին

- 1,000,000 ռիալ. Գայեանէ Եղիազարեան, Նորիկ Ալլահվերդեան:
- 600,000 ռիալ. Վանուիրի Ցովսէփեան (Ղազարեան):
- 500,000-ական ռիալ. Մինաս Գէորգեան, Կարօ Ցովսէփեան, ոմն (3)
- 270,000 ռիալ. Սինիկ Սոհիրանեան:
- 200,000-ական ռիալ. Ժենիկ Թորոսեան, Փաղիս եւ Փա-

նիա Մոմէնզադէ:

- 100,000-ական ռիալ. Ժաննա Մադաթեան, Ալի Փուլ:

Խաչի գոյգելու փոխարէն

- 100,000-ական ռիալ. Արմինէ Մելիքեան (2), Հրանուշ Դաւթեան:

Ս. Ստեփանոս եկեղեցին

- 500,000 ռիալ. Արմինէ Աւետեան ի յիշատակ Բենուշ Աղաբարպեան:

Մ. Մինաս եկեղեցին

- 18 հատ թէյի բաժակ եւ 2 հատ շաբարաման. Էլիզ, Զափիկ եւ Վարդան Խորովյեամներ:

- Ածուխի տեղ. Մասիս Քեշիշեան:

- Ածուխի տեղ եւ խնկի տեղ. Մասիս Մկրտչեան:

- Ժամացոյց՝ բահանայի գրասենակի համար. Զանսոն Աղաբարպեան:

Հանգուցեալ Զարդար Դաւթեանի յիշատակին

- 500,000-ական ռիալ. Արամ եւ Լուսիկ Ղամանդեաններ, Վարդան եւ Ալմաստ Դաւթեաններ:

- 200,000-ական ռիալ. Շահէն Դաւթեան, Ցակոր Մարկոսեան, Ցարութ Բաղդասարեան, Մեսրոպ Դաւթեան, Հերոս Աւանեսեան:

- 150,000 ռիալ. Արսէն Շահրազեան:

- 100,000-ական ռիալ. Արուտեակ Աղաչանեան, Երևանդ Խաչիկեան, Լուսիկ Ցարութիւնեան, Եղասրեթ Միրչաննեան, Զանիկ Ղազարեան, Սիմիկ Ղարախաննեան, Խաչատուր Ղազարեան, Մալուս Ցովսէփեան, Արարատ Աղախաննեան, Տիգրան Քեշիշեան, Վազգեն եւ Ժովիետ Անդրիասեաններ, Գաոնիկ Ցովհաննիսեան

- 50,000-ական ռիալ. Համազ Մարգարեան, Վարդան եւ Ռիթա Մկրտչեաններ, Պերճիկ Քամարզարեան, Խողարք Մանուկ:

Հանգուցեալ Արեգ Հայրապետեանի յիշատակին

- 1,000,000 ռիալ. Էլիփրա եւ Դիանա Ղազարեաններ:

- 200,000-ական ռիալ. Ռոբերտ եւ Անի Մկրտչեաններ, Թախուլ Օհանեան:

Հանգուցեալ Հրանուշ Շահբաղեանի յիշատակին

- 200,000-ական ռիալ. Ցակոր Մարկոսեան, Արսէն Շահրազեան, Բաղդասար Շահնազարեան:

- 100,000-ական ռիալ. Հրաշ Ղարախաննեան, Հերոս Աւանեսեան:

- 50,000-ական ռիալ. Վարդինէ Շահրազեան, Զանիկ Առաքելեան:

Հանգուցեալ Սոնիկ Մանջուկեանի յիշատակին

- 500,000-ական ռիալ. Հայուիտա Բարեգործական Ընկերութիւն, Բաֆֆիկ եւ Ուգա Բարումեաններ:

- 300,000 ռիալ. Գառնիկ եւ Արմինէ Կիրակոսեաններ:

- 200,000-ական ռիալ. Մարշիկ Մինասեան:

- 150,000 ռիալ. Բաղդասար Շահնազարեան:

- 100,000-ական ռիալ. Անդրէ Մարմազեան, Ալեքեր Սահկանաններ:

- 50,000 ռիալ. Ռոբերտ Սահկանաններ:

Հանգուցեալ Մաղիկ Ասլանեանի յիշատակին

- 200,000 ռիալ. Հայուիտա Բարեգործական Ընկերութիւն:

- 100,000 ռիալ. Ռոբերտ Սահկանաններ:

- 80,000 ռիալ. Վրէժ Մարմազեաններ:

- 60,000 ռիալ. Անդրէ Մարկոսեան:

- 300,000 ռիալ. Միսակ Թահմազեան:

- 250,000 ռիալ. Աղազօլ եւ Սոնիկ Յարութիւնեաններ:
- 200,000-ական ռիալ. Աննիկ Քեշշեան, Յովսէփ Յովսէփեան, Գուրգեն Թահմազեան:

- 150,000-ական ռիալ. Գորեգին Մարկոսեան, Արարատ Շահրաբեան, Համայակ Յովսէփեան, Հայկազ Պետրոսեան:

- 100,000-ական ռիալ. Մուշեղ Ղարիբեան, Վարդանուշ Մկրտչեան, Հայկազ Ղազարեան, Ամիրիսան Ղազարեան, Յարութ Քեշշեան, Մաքրումի Մարկոսեան, Զաւեն Խաչիկեան, Մատթեոս Խաչիկեան:

- 50,000 ռիալ. Մասիս Յովսէփեան:

Հանգուցեալ Արէլ Մարգիսեանի լիշտառակին

- 500,000 ռիալ. Ս. Ա. Վանքի Կոմիտաս Երգչախումբ:

- 350,000 ռիալ. Վարդէկ Պետրոսեան:
- 300,000 ռիալ. Փերիոյ Կրթասիրաց Միութիւն:
- 250,000 ռիալ. Ս. Գրիգոր Լուսատրիչ Եկեղեցու կանանց յանձնախումբ:

- 200,000 ռիալ. Մարօ Բաղումեան:

- 150,000 ռիալ. Սերոժ եւ Շաքէ Խանլարեաններ:

- 100,000-ական ռիալ. Թաթով Օհանեան, Մարօ Ալումեան:

- 60,000 ռիալ. Հայկազ Ղազարեան:

- 50,000-ական ռիալ. Պերճիկ Քամարզարեան, Սոֆիկ Եսայան:

Հանգուցեալ Խորեն Ղարիբեանի լիշտառակին

- 500,000 ռիալ. Մինաս եւ Հրանուշ Թահմազեաններ:

- 300,000-ական ռիալ. Հայ Ռասում. Զարմահալ Միութիւն, Վալորդիա Մինասքանեան, Էդին Յովսէփեան:

- 250,000 ռիալ. Արազ Ղարիբեան:

- 200,000-ական ռիալ. Թաթով Ալլարիվերդեան, Արեւիկ Ալլարիվերդեան, Ս. Ա. Վանքի Կոմիտաս Երգչախումբ, Ասպետ Խառուպեան:

- 150,000-ական ռիալ. Հրաչյակ Ղարիբեան, Գրիշ Թորոսեան, Գարեգին Մարկոսեան, Ոլգա Թահմազեան:

- 100,000-ական ռիալ. Մուշեղ Ղարիբեան, Շաքէ Ղարիբեան, Զանիկ Ղազարեան:

- 50,000 ռիալ. Հրաչ Մինասեան:

Հանգուցեալ Ճորժ Մկրտչեանի լիշտառակին

- 300,000 ռիալ. Ռազմիկ եւ Արարու Մկրտչեաններ:

- 200,000-ական ռիալ. Յարութ Կիրակոսեան, Աղրինէ Խանլարեան:

- 150,000 ռիալ. Արտեն Շահրազեան:

- 100,000-ական ռիալ. Աննիկ Խաչիկեան, Սերոժ եւ Շաքէ Խանլարեաններ:

Հանգուցեալ Գառնիկ Սէթ Աղայեանի լիշտառակին

- 200,000-ական ռիալ. Խաչիկ Յովսէփեան, Նորիկ Յարութիւնեան:

Հանգուցեալ Կարօ Զաքարեանի լիշտառակին

- 500,000 ռիալ. Արթին Դաւթեան:

- 200,000 ռիալ. Վարուժ Դաւթեան:
- 100,000-ական ռիալ. Ղարիք Մարկոսեան, Մաքրումի Մարկոսեան, Վազրիկ Բեգիչանեան, Ղուկաս Գրիգորեան:

Հայ Դատի Ն.Զ. յանձնախումբ

- 2,000,000 ռիալ. Ասպետ Վարդանեան Միրանուշ Կարապետեանի յիշտառակին:

- 500,000-ական ռիալ. Ն.Զ. Հայոց առաքելական Եկեղեցեաց վաշչութիւն, Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութիւն (3) Ժորժ Մկրտչեանի, Մարօ Բաղրամարեան Ներսիսեանի եւ Խորէն Ղարիբեանի յիշտառակին:

Ն. Զ. Հայ Մ.Ա. «Արարած» միութիւն

«Միջը» թատերախմբի ներկայացման առթիւ

- 500,000 ռիալ. Շահինշահրի հայ համայնքի վարչութիւն:

- 300,000-ական ռիալ. Ն. Զ. Հայ կանանց գթութեան միութիւն, Փերիոյ Կրթասիրաց միութիւն, Ն. Զ. Հայութեաց բարեգործական ընկերութիւն, Հայ ուս. Զարմահալ միութեան նոր Զուղացի մասնաճիւր:

- 250,000 ռիալ. «Քանանեան» դպրոցի տեսչութիւն եւ ուսուցական կազմ:

- 200,000-ական ռիալ. Հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարամի տեսչութիւն եւ ուսուցական կազմ, «Արմէն» կրթահամալիրի տեսչութիւն եւ ուսուցական կազմ, Ս.Ս. վաճիքի «Կոմիտաս» երգախմբի վարչութիւն, Հայոց Ալեքսանադրեան:

Սկառուտական Միաւորի 37-ամեակի տարերարքի առթիւ

- 200,000 ռիալ. Նարինէ, Մեղեդի եւ Լիլիան Քեշշեաններ:

- 150,000 ռիալ. Վարագ եւ Մեղեդի Փանոսեաններ:

- 100,000-ական ռիալ. Ռոբերտ Սիմոնեան, Արթին Վարդանան, Մանիա Ղուկասեան, Ներենիկ Մորոսեան, Լեռնիկ Այսական, Սեպուհ Վարդանան, Մանիա Բեգիչանեան, Նարեկ Սիրջանեան, Մասիս Սիրջանեան, Սերինէ Թահմազեան, Ռոբերտ Աղայեան, Վեհանուշ Խուտարախչեան, Հորիկ Թահմազեան, Սարգիս Սէլիկերեան, Վարդիկ Թորոսեան, Հայ դատի յանձնախումբ, Նարբէ Քոչարեան, Կարեն Ղարախանեան:

26-րդ Գարնանային Խաղերի բացման ծրագրի առթիւ

- 1,000,000 ռիալ. Անիշա Խաչեան:

- 500,000-ական ռիալ. Սպահանի հայոց թեմի Պատգամաւրական ժողովի դիւան, Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութիւն, Ն.Զ. Հայութեաց բարեգործական ընկերութիւն, Նարեկ Միրզայչեան, Մինելի Ղազարեան, Հայկազ Դավթեան, Փաէլ Օսիփով, Նորիկ Պողոսեան, Կարինէ Զարգարեան, Նասիկ Սելիկերեան, Վարդիկ Թորոսեան, Հայ դատի յանձնախումբ, Նարբէ Քոչարեան, Մանիա Մինասեան, Կարեն Ղարախանեան:

- 400,000 ռիալ. Գեղարդ Մանսուրեան:

- 300,000-ական ռիալ. Սելինէ Խուտարախչեան, Հիմենզ Դաւթեան, Սերժիկ Ասատրեան, Օշին Տ. Գրիգորեան, Դիմիրի Ցովինանիսեան:

- 250,000-ական ռիալ. Յասմիկ Յովսէփեան, Յովիկ Դիլանչեան:

- 200,000-ական ռիալ. Ն.Զ. Հայ ազգային «Արմէն» համալիր, Փերիոյ Կրթասիրաց միութիւն, Սիրան Ալումեան, Այլին Մելիքեան, Կարէն Աւետեան, Մեղեդի Հայրապետեան, Արմնոն Ալեքսանդրեան, Արփա Անդրիասեան, Քրիստինէ Օհանեան, Անգինէ Ղազարեան, Լոսիա Մատթէոսեան, Սիրնէ Շահջանեան:

- 150,000-ական ռիալ. Սիլա եւ Յովիկ Աղախանեան, Լուսին Ասատրեան, Քրիստինէ Յակոբեան:

- 100,000 ռիալ. Դուրան Տ. Յովիկաննիսեան:

Ս.Ա. Վանի «Կոմիտաս» երգախումբ

- 1,000,000-ական ռիալ. Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհուրդ, Մերի Մելիքեան, Վրէժ եւ Էմիկ Տէր Մարտիրոսեաններ:

- 500,000 Ն.Զ. Հայոց առաքելական Եկեղեցեած վարչութիւն, Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութիւն, Ն.Զ. Հայ Մ.Ս. «Արարատ» միութիւն, Վահիկ Թահմազեան, Անահիտ Թէլմուրեան, Վարդէկ Պետրոսեան, Ռիմա Օհանեան, Լոսիա Մատթէոսեան, Սիրնէ Շահջանեան:

- 400,000 ռիալ. Ռուբեն Ղարիբեան:

- 300,000-ական ռիալ. Քրիստոնէ Վարդելական ընկերութիւն, Հայ ուս. Զարմահալ միութիւն, Փերիոյ կրթասիրաց միութիւն, Նարէ Ասատրեան, Թաթով Ալլարիվերդեան, Կարինէ Սրբակ Խաչիկերեան, Վարդիկ Ռուբեն Խաչիկերեան:

